

Ապարաժ

Ֆինանսավարձ է 1991 թվականին: 01 (425) 1-31 հունվար, 2018թ.



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ազգային գաղափարախոսության առաջամարտիկ

Որեւէ երկրի կամ պետության ընկալյալ խորհրդանիշներից բացի, պետական համակարգում կան մարմիններ, որոնք ըստ էության կրում են խորհրդանիշ լինելու առաքելություն: Այս դիտանկյունից յուրաքանչյուր պետության համար կարեւորագույն խորհրդանիշներից մեկը զինված ուժերն են, մասնավորապես բանակը: Պետության զինված ուժերը նախ եւ առաջ վկայում են երկրի անկախության իրողության մասին, ապա ծառայում որպես պաշտպանվածության եւ անվտանգության երաշխավոր:

Յուրաքանչյուր երկիր, որն ունի բանակ, հպարտանում է իր ուժերի վրա հիմնվելով իր երկրի ինքնիշխանության պահպանման ունակությամբ: Իսկ թույլ, մասնատված, փլուզման եզրին կանգնած երկրների ամենախոցելի կողմը դեռ նախքան պետական համակարգի անկումը լինում է բանակը:

Հայկական բանակի օրը նշվում է հունվարի 28-ից: 1992-ի այդ օրը պատմական որոշում ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության վերաբերյալ»՝ այդ կերպ հայտնելով Հայկական Ազգային Բանակի ստեղծման մասին:

2018 թվականին նշում ենք Հայաստանի պետականության վերականգնման 100-ամյակը: Այդ օրերի հուշագրությունները թերթելով՝ Հայաստանի բանակի եւ զինված ուժերի վերաբերյալ հանդիպում ենք տարաբնույթ մեկնաբանությունների: Չենք կարող հպանցիկ անցնել 1919 թվականի Հանրապետության մեկամյա տարեդարձին նվիրված Հայոց բանակի Երեւանյան շքերթի կողքով: Չենք կարող նաեւ չնկատել այն դասալքությունը, որն ապրեց հայկական բանակը 1920 թվականին՝ Կարսի անկման ժամանակ: Իսկ այս բոլորից պետք է դասեր քաղել: Դասեր պետք է քաղել նաեւ մեր օրերի իրադարձություններից: Ապրիլյան պատերազմից հետո բանակում տիրող մթնոլորտը միանգամից վերափոխվեց: Բանակը մի ակնթարթում դարձավ բոլորիս մտահոգության առարկան ու աչքի լույսը: Իսկ մեր պայմաններում, արցախյան իրականության մեջ ավելի խորը եւ ամբողջական զգացիկ բանակի կարեւորությունն ու պարծենում մեր Հայկական բանակով:

Դաշնակցությունը միշտ կողմնակից է եղել համաժողովրդական բանակ, ազգային բանակ կամ, ինչպես հիմա է ասվում, ազգ-բանակ գաղափարախոսությամբ: Իսկ ազգ-բանակ գաղափարախոսությունը ոչ այլ ինչ է, քան յուրաքանչյուր հայի մասնակցությունը հայոց բանակի կայացմանն ու հզորացմանը:

Մյուս կողմից, բանակը եւս պարտականություն ունի յուրաքանչյուր հայի հանդեպ: Բանակը պետք է դառնա այն կոփման վայրը, որտեղ յուրաքանչյուր հայ պետք է զգա ազգային դաստիարակության ոգին ու շունչը: Անշուշտ, ազգային գաղափարախոսությամբ տոգորված բանակն առավել հզոր է ու անկոտրուն: Ազգային բանակ դառնալու համաժողովրդական աշակցություն վայելելու պատասխանատվությունը ծանր է: Իսկ այդ պատասխանատվությունը իր վրա պետք է կրի յուրաքանչյուր բանակային՝ շարքային զինվորից սկսած մինչեւ գերագույն գլխավոր հրամանատար:

Թող հայոց ազգային բանակի դրոշմ երբեք չխուսափի, եւ այդ դրոշի առաջնորդությամբ իրականացնենք մեր ժողովրդի ազգային գաղափարները՝ իրականացնենք Միացյալ եւ Անկախ Հայաստանի տեսլականը:



Տեղի է ունեցել ՀՀ Կրգախի կառույցի Շրջանային ժողովը

Հունվարի 26-28-ը ՀՀ Կենտրոնական կոմիտեի «Նիկոլ Դուման» կենտրոնում կայացել է երկու տարին մեկ գումարվող՝ ՀՀ Կրգախի կառույցի Շրջանային ժողովը:

Ժողովին ներկա էին ՀՀ Բյուրոյի անդամ Կիրո Մանույանը, ՀՀ Կրգախի շրջանավարտ Կենտրոնական կոմիտեի անդամներ, պատվիրակներ ՀՀ Կրգախի բոլոր շրջանային մարմիններից, հրավիրյալ ընկերներ:

Ժողովը լսել է շրջանավարտ ԿԿ-ի երկամյա գործունեության տեղեկագիրը, գնահատել ԿԿ գործունեությունը եւ առաջադրանքներ ճշտել նորընտիր ԿԿ-ի համար:

Ժողովի ավարտին կայացել է նոր Կենտրոնական կոմիտեի ընտրություն: Զվեարկության արդյունքում՝ ընտրվել է Կենտրոնական կոմիտեի հետեւյալ կազմը՝ Լեռնիկ Յովհաննիսյան, Դավիթ Իշխանյան, Վահրամ Բալայան, Կամո Բարսեղյան, Սեւակ Խաչատրյան, Միտի Պողոսյան, Ժիրայր Ծահիջանյան, Վահագն Դադայան, Գագիկ Մարտիրոսյան:

ՀՀ Կրգախի կառույցի 2018-20 թվականների գլխավոր անելիքների մասին «Ապարաժ»-ը գրուցել է ԿԿ-ի վերընտրված ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի հետ:

«Ժողովը որպես ռազմավարական նպատակ հաստատել է, որ ՀՀ Դաշնակցությունը որպես համահայկական կառույց բոլոր միջոցներով պետք է աջակցի Արցախի միջազգային ճանաչմանը, Արցախի քաղաքական անկախության ու տնտեսական ինքնաբավության, բարեկանական խմբերի եւ շրջանակների ընդլայնմանը եւ երկրի անվտանգության ու պաշտպանության համակարգի ամրապնդմանը», - ընդգծել է Դավիթ Իշխանյանը:

Ներքին քաղաքական իմաստով կարեւորվել է Արցախի քաղաքական դաշտի կայացումը եւ քաղաքական ուժերի հետ փոխհարաբերությունների անհրաժեշտությունը: «Ապագա երկամյակում լուրջ ուղղություն ենք դարձնելու «Տեղական ինքնակառավարման մարմին-

ների մասին» եւ «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքների ընդունմանը, ինչպես նաեւ Սահմանադրությունից բխող մի շարք օրենքների», - նշել է ՀՀ Կրգախի կառույցի ներկայացուցիչը:

Շրջանային ժողովն ուշադրության արժանացրեց նաեւ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը միտված քայլերը: «Կենտրոնական կոմիտեին հանձնարարվեց համատեղ աշխատանք տանել իշխանությունների հետ եւ մշակել համապատասխան ռազմավարական ծրագրեր՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման, վերաբնակեցման եւ հայրենադարձության նպատակով», - նշել է Դ. Իշխանյանը:

Օրակարգային կարեւոր հարցերից էր նաեւ 2020 թվականին կայանալիք համապետական ընտրությունները: Զննարկվեցին «որոշակի առաջարկներ», իսկ ընտրություններին «մասնակցության ձեւաչափի հարցը կհստակեցվի ապագա քննարկումների արդյունքում»:

«Ապարաժ»-ի եւ «Ազգակ»-ի միասնական բացառիկ համար



Արցախյան շարժման 30-ամյակի կապակցությամբ Լիբանանի եւ Արցախի ՀՀ Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթեր «Ազգակ» օրաթերթն ու «Ապարաժ» երկշաբաթաթերթը փետրվարի ավարտին հրատարակելու են միասնական բացառիկ համար: Բացառիկ համարում տեղ են գտնելու պատմական իրողության հետ կապված հոդվածներ, հուշագրություններ, վերլուծություններ եւ հարցազրույցներ շարժմանը մասնակից անձանց հետ: Այսու հրավիրում ենք այն անձանց, ովքեր ցանկանում են իրենց նյութերը հրապարակել բացառիկ համարում, մինչեւ սույն թվականի փետրվարի 10-ը իրենց հոդվածն ուղարկել «Ապարաժ»-ի էլեկտրոնային հասցեին (aparajtert@gmail.com) կամ հանձնել խմբագրությանը (ք. Ստեփանակերտ, Կուռնյանցների 17):

Եվրախորհրդարանի պատգամավոր Լարս Ադակտուստնը Արցախում



Հունվարի 25-27-ը Արցախում էր գտնվում Եվրախորհրդարանի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Լարս Ադակտուստնի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին նրա գրասենյակի տնօրեն Չարլի Վեյմարսը, ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի ղեկավար Գասպար Կարապետյանը և ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի աշխատակիցներ Յեդիսե Եվինյանն ու Աշխեն Ֆիքսովան:

Արցախում գտնվելու երկու օրերի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ԱՀ նախագահի, ԱՀ ԱԾ նախագահի, ԱԳ նախարարի, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի հետ, Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի հետ, հանդիպել են նաև «HALO trust» ոչ կառավարական կազմակերպության հետ, որտեղ ծանոթացել են Արցախում ակադեմիայի աշխատանքների կազմակերպմանը:

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը Լարս Ադակտուստնի գլխավորած պատվիրակության ընդունել է հունվարի 25-ին: Հանդիպմանը քննարկվել են Արցախ-Եվրոպա կապերի վերաբերող մի շարք հարցեր: Նախագահ Սահակյանը նշել է, որ Արցախում շահագրգռված են Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական այլ կառույցների հետ հարաբերությունների խորացմամբ ու ընդլայնմամբ՝ հավելելով, որ դա հանդիսանում է մեր հանրապետության արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Իսկ հունվարի 26-ին բարձրաստիճան հյուրերին ընդունել է ԱԾ նախագահ Աշոտ Դուլյանը: Խորհրդարանի նախագահը բարձր է գնահատել Եվրոպացի գործընկերների այցերը՝ նշելով, որ դրանք նպաստում են Եվրոպական արժեհամակարգի զարգացման Արցախում:

Լարս Ադակտուստնը նշել է, որ Արցախում է փաստաբանական առաքելությամբ: Նա համոզմունք է հայտնել, որ այցի ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը օգտակար կլինի Արցախի մասին ճշգրիտ պատկերացում ձեռնարկելու և հետագա գործունեության ընթացքում կիրառելու համար:

Այնուհետև տեղի է ունեցել պատվիրակության հանդիպումը «Արցախի Հանրապետություն-Եվրախորհրդարան» բարեկամական խմբի անդամների հետ:

Բարեկամական խմբի ղեկավար, ԱԾ նախագահի տեղակալ Վահրամ Բալայանը անդրադարձել է արտաքին քաղաքականության բնագավառում առկա խոչընդոտներին և ընդգծել, որ նման ձեռնարկով հանդիպումները հնարավորություն են տալիս Արցախի ձայնը լսելի դարձնել:

Պատասխանելով պատգամավորների հարցերին՝ Ադակտուստն անդրադարձել է իրաքյան քրդերի և Իրաքում ու Սիրիայում քրիստոնյաների իրավունքներին, ինչպես նաև Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցությանը:

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանի հետ հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրել է Արցախի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, մասնավորապես՝ Արցախի միջազգային ճանաչման և ադրբեջանա-դարբադյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացներում առաջընթացի ձեռքբերման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը համոզմունք է հայտնել, որ ԵՄ համագործակցությունն Արցախի հետ իր ներդրումը կունենա տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդման գործում, քանի որ կցուցադրի Արցախի մեկուսացմանն ուղղված Ադրբեջանի քաղաքականության անթույլատրելիությունը՝ որպես հակամարտության կարգավորման միջոց:

ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Սերգեյ Շահվերդյանը, կարենորելով հյուրերի առաքելությունը, ներկայացրել է գերատեսչության ղեկավարվող ոլորտների գործունեությունն ու առաջնահերթությունները: Նախարարը մասնավորապես նշել է, որ որպես առաջին քրիստոնեական երկրի մշակույթ, հայկական մշակույթն ունի հարուստ պատմություն ու մշակութային մեծ ժառանգություն, որը պետք է

ներկայացված լինի Եվրոպական երկրներում: Կարենորել է համագործակցությունը միջազգային մշակութային կառույցների հետ, ինչը հնարավորություն կտա ներկայացնելու արցախյան մշակույթը՝ անկախ մեր պետության չճանաչված լինելու հանգամանքից:

Վերոնշյալ ելույթի հանդիպումներից հետո հունվարի 27-ին ԱԾ Նիստերի փոքր դահլիճում տեղի է ունեցել Արցախի ժամանած պատվիրակության մամուլ ասուլիսը: Ասուլիսի սկզբում Եվրախորհրդարանի պատգամավոր Լարս Ադակտուստնը հակիրճ ամփոփել է Արցախ կատարած այցը:

«Ես Եվրոպական պառլամենտում արտաքին հարաբերությունների հանձնաժողովի, միևնույն ժամանակ Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ եմ և մարդու իրավունքներն իմ աշխատանքներում մեծ տեղ են զբաղեցնում: Եվ ուրախալի է տեսնել, որ Արցախում ամեն ինչ շատ ճիշտ է ընթանում», - նշել է Լարս Ադակտուստնը:

Ըստ Եվրախորհրդարանի պատգամավորի՝ հանդիպումների ընթացքում քննարկել են Նոր Սահմանադրությանը, մարդու իրավունքին, հակամարտությանը վերաբերող հարցեր: «Շատ տպավորված եմ Արցախի ժողովրդով: Այստեղ մենք գործ ունենք մի հասարակության հետ, որը ճնշման է ենթարկվել, բայց սա մի ժողովուրդ է, որը ձգտում է ապրել լավ կյանքով և կառուցել ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված պետություն», - ասել է Լարս Ադակտուստնը և ավելացրել, որ Եվրոպացիները պետք է ավելի ակտիվ դեր խաղան խաղաղության տարբեր նախաձեռնություններում, որպեսզի երկխոսությունն ավելի ակտիվ է ճիշտ ընթանա:

Պատվիրակությունն Արցախ է ժամանել ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախաձեռնությամբ ու ջանքերով: ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը նշել է, որ այսպիսի նախաձեռնությունները պետք է շարունակվեն Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքի պաշտպանության համար: «Այս շրջանում մեր հիմնական աշխատանքը շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրմանը հասնելն է, որը հնարավորություն կտա պարզելու հրադադարի ռեժիմը խախտող կողմին», - նշել է Գասպար Կարապետյանը՝ հավելելով, որ առաջիկայում պետք է Արցախյան շարժման 30-ամյակին, Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին, Արցախի առաջին համագումարի 100-ամյակին նվիրված միջոցառումներ կազմակերպվեն Եվրոպայում, Հայաստանում և Արցախում:

Այնուհետև լրագրողները հարցեր են ուղղել հյուրերին, որոնք հիմնականում վերաբերում էին Արցախի ճանաչմանը, Արցախում մարդու իրավունքների պաշտպանությանը, Եվրոպայում Արցախի ձայնը հնչեցնելուն:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Կառավարության գործունեությունը 2017-ին

Ամփոփիչ ասուլիսներ

Համոզված եմ, որ 2018թ. սոցիալ-տնտեսական առումով Արցախի համար լինելու է բեկումնային. Արայիկ Հարությունյան

Հունվարի 17-ին կայացել է ԱՀ պետական նախարար Արայիկ Հարությունյանի՝ 2017թ. գործունեության ամփոփիչ մամուլի ասուլիսը:

«Համոզված եմ, որ 2018թ. Արցախի համար սոցիալ-տնտեսական առումով լինելու է բեկումնային՝ ավելին, քան երբեք ունեցել ենք», - բացման խոսքում նշել է պետնախարարը: Այս կանխատեսումը, ըստ պետնախարարի, մի շարք հիմնավորումներ ունի: 2018թ. աճ է նախատեսվում հանքարդյունաբերության ոլորտում, Էներգետիկայի ոլորտում: Շինարարական աշխատանքների փուլում գտնվող հեկտերի մեծ մասը շահագործվելու է 2018թ.: «Երրորդ ուղղությունը գյուղատնտեսությունն է: ԱՀ նախագահի հանձնարարականով չմշակված հող չպիտի լինի, որը մենք պետք է կյանքի կոչենք: 2017 թ. աննախադեպ տարածք է մշակվել՝ մոտ 80.000 հա, որը մենք պետք է ընդունենք որպես նվազագույն կետ: Այգեգործության բնագավառում ենք մեծ աշխատանքներ իրականացնում, որն իր արդյունքը կտա», - նշել է Արայիկ Հարությունյանը՝ ավելացնելով, որ մեծ ակնկալիքներ կան շինարարության և զբոսաշրջության ոլորտներից:

Պատասխանելով 2017թ. վերաբնակեցման ոլորտում իրականացված աշխատանքների մասին «Ապառաժ»-ի հարցին՝ ԱՀ պետնախարարը նշել է, որ վերաբնակեցման ուղղությամբ իրականացվել է բնակարանային շինարարություն՝ հիմնականում Քաշաթաղի շրջանի տարբեր բնակավայրերում՝ Աղավոյում, Իշխանաձորում, Կովսականում, Միջնավանում: «Իշխանաձորը մեր ամենահեռանկարային և ամենագեղեցիկ բնակավայրերից մեկն է, որն ունի նաև ստրատեգիական կարևոր նշանակություն

և», - ասել է Արայիկ Հարությունյանը՝ ավելացնելով, որ 2018թ. պետական բյուջեով ավելացվել է ոլորտի ֆինանսավորումը: Արաքսավանում, Առաջամուղում, Քարվաճառում, Քաշաթաղում նախատեսվում են բնակարանային ֆոնդի ավելացում, Նոր աշխատատեղերի բացում, շարունակվելու են աշխատանքները Թալիշում:

ԱՀ պաշտպանության նախարարն ամփոփել է անցած տարին

Հունվարի 24-ին բանակի տեղեկատվական կենտրոնում տեղի է ունեցել ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի՝ 2017թ. բանակային տարվա արդյունքների ամփոփմանը նվիրված մամուլի ասուլիսը:

Լեւոն Մնացականյան անդրադարձել է հակառակորդի անցկացրած զորավարժություններին, առաջնագծում վերջինիս իրականացրած կահավորական աշխատանքներին, գեներալի և զինտեխնիկայի զնումներին: Ներկայացնելով 2017թ. Պաշտպանության բանակում կատարված աշխատանքները՝ Արցախի Հանրապետության ռազմական գերատեսչության ղեկավարը նշել է, որ ադրբեջանական զինուժի ոչ մի գործողություն անկատ չի մնացել, եւ բանակը ձեռնարկել է համարժեք քայլեր, որոնք այսուհետ եւս թույլ կտան ապահովել մեր ժողովրդի խաղաղ կենսագործունեությունը: Նախորդ տարվա ընթացքում բանակում կատարված աշխատանքներից Լեւոն Մնացականյանն առանձնացրել է դիրքապահների համար առավել ակտիվ ծառայության պայմանների ստեղծումը, մարտական հերթապահությունում ընդգրկված զինծառայողների պատրաստության մակարդակի բարձրացումը, զինվորական կարգապահության բարձրացման ուղղությամբ տարված աշխատանքները, հրետանային և ՀՕՊ համակարգերի կատարելագործումը, շտաբների փոխգործակցության

և ներդաշնակման ուղղությամբ կատարված քայլերը, բանակում բարոյա հոգեբանական վիճակի ամրապնդման ուղղությամբ տարված աշխատանքները, Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, Նոր դիրքերի կահավորումը, դիտարկման համակարգերի կատարելագործումը, ճանապարհային ցանցի զարգացումը, տեխնիկական և թիկունքային ապահովության բարձրացման հարցերը:

Ամփոփելով տարին՝ բանակի հրամանատարը նշել է, որ Պաշտպանության բանակին հաջողվել է պահպանել խաղաղությունը և Արցախի ժողովրդի անվտանգությունը՝ վստահեցնելով, որ ՊԲ-ն ի գործ է կանխել հակառակորդի ցանկացած ոտնձգություն և պատվով կատարել իր առջեւ դրված մարտական խնդիրը:

ԱՀ ֆինանսների նախարար Գրիգորի Մարտիրոսյանը մամուլի ասուլիս է հրավիրել

Հունվարի 12-ին ԱՀ ֆինանսների նախարար Գրիգորի Մարտիրոսյանը հրավիրել է մամուլի ասուլիս՝ նվիրված 2017 թվականի տնտեսական ցուցանիշներին, հարկային քաղաքականությանը, ֆինանսների նախարարության կողմից այլ ոլորտներում իրականացվելիք ծրագրերին և 2018 թվականի պետական բյուջեին:

Խոսելով 2017 թվականի մասին՝ նախարարը նշել է որ տարին եզրափակել ենք բարձր տնտեսական աճով: Այն կազմում է շուրջ 15.0 տոկոս՝ 1.0 տոկոս ղեֆլյատորի պայմաններում, որը վերջին 10 տարիների ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է:

«Մյուս բարձր աճի տեմպի համար հիմք է հանդիսացել նյութական արտադրության, մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության, ճյուղերի ավելացված արժեքի աճը, որն ապահովել է տնտեսական աճի մոտ 6.0 տոկոսային կետը», - մասնավորապես ասել է Գ.Մարտիրոսյանը:

Մտորումներ Արցախյան շարժման մասին



ՀՀԴ ԿԿ անդամ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայան

1980-ական թվականների վերընթացող փուլում Արցախյան ազգային-ազատագրական շարժումը շատ բան փոխեց հայության կյանքում:

Արցախյան շարժումն առաջին հերթին պայքար էր մարդու իրավունքների, Աստծո կողմից նրան տրված ազատ ապրելու իրավունքի վերահաստատման համար: Դա բավականին հումանիստական էր, եւ պատահական չէ, որ մենք շատ համակիրներ ունեցանք՝ ի դեմս տարբեր պետությունների, ժողովուրդների, որոնք շատ դեպքերում անգամ Արցախի տեղը չգիտեին: Շարժման շնորհիվ նրանք հասկացան, որ երկրագնդի մի հատվածում բնակվող մի ժողովուրդը ձգտում է ազատ ապրել եւ պաշտպանել իր տարրական իրավունքները: Այս իսկ տեսանկյունից կարելի էր համաշխարհային հանրությանը ներկայացնել, որ սա անապահովության շարժում չէր, տարածքի համար կռիվ չէր, այլ պայքար էր ազատության ու անկախության համար: Կարծում եմ՝ համաշխարհային հանրության կողմից այս ամենն ընկալվեց:

Երկրորդ կարեւոր հանգամանքն այն էր, որ մեր շարժումն ընթացք ստացավ միջազգային իրավական եւ տվյալ ժամանակաշրջանի հանրությանը ներկայացնելու շրջանակներում: Այսինքն, այդ ամենն ունեցավ իրավական հիմնավորում, եւ այս տեսակետից մեր շարժումն անխոցելի է: Առայսօր միջազգայնագետները, իրավաբանները, պետական գործիչները նմանատիպ գնահատականներ տալիս են, որով մեր պայքարը տարբերվում է շատ ու շատ երկրներում սկսված նմանատիպ շարժումներից:

Արցախյան շարժումը նաեւ հնարավորություն ստեղծեց, որպեսզի նորից վերանայնանք եւ հայկական պետականությունը: Ընդունելով, որ մենք խորհրդային տարիներին թե՛ հորհրդային Հայաստանում, թե՛ ԼՂԻՄ-ում պետականության

որոշակի նշույլներ ունեինք, բայց անկախությունը լիարժեք չէր: Շարժումը նման հնարավորություն ստեղծեց, որպեսզի բազում դարերի պետականություն ունենալու երազանքը իրականություն դառնա: Պետականությունը հնարավորություն տվեց, որ ազգն ապրի, հարատևի, դիմակայի տարածաշրջանի մարտահրավերներին:

Շարժման կարեւոր պահերից մեկն էլ այն էր, որ Արցախյան պայքարը ինչ-որ տեղ ձախողեց Թուրքիայի եւ Ադրբեջանի քաղաքական էլիտայի մոտ տասնյակ տարիներ գուրգուրանքով պահպանված պանթուրքիստական գաղափարախոսության իրագործումը: Մեզ համար տեսանելի էր, որ Ադրբեջանը նպատակաուղղված քաղաքականություն էր վարում, որպեսզի հայաթափի Արցախը: Այս ծրագիրը, որը միս ու արյուն էր ստացել Թուրքիայում, նպատակ ուներ հայաթափել նաեւ բուն հորհրդային Հայաստանի տարածքը: Պատահական չէր, որ հենց Թուրքիայի անմիջական ջանքերով 1921թ. Արցախը, Նախիջեւանը բռնակցվեցին Ադրբեջանին: Դա այդ ծրագրերի մի մասն էր կազմում, եւ խորհրդային ողջ ժամանակահատվածում նպատակային քաղաքականություն էր վարվում, որպեսզի հորհրդային Հայաստանի, մասնավորապես Նախիջեւանի հարակից հատվածներում՝ Կապանում, Սիսիանում, Վայոց Ձորում թուրքական տարրը հաստատվի: Ժամանակի ընթացքում վերաբնակեցման միջոցով կարողացան նշված վայրերում ստեղծել թուրքական գյուղեր, որոնք մահացու վտանգ դարձան մեր պետականության եւ ընդհանրապես հայության ինքնության պահպանման համար: Արցախյան շարժումը հնարավորություն տվեց, որպեսզի այս գոտին նույնպես վերադառնա իր նախկին տիրոջ եւ չիրագործվի մեզ համար կործանարար ծրագիրը: Այս տեսանկյունից Արցախյան շարժումն անգնահատելի է:

Արցախյան շարժումը նաեւ փոխեց, հեղաբեկեց մարդու հոգեբանությունը, նրա գաղափարախոսությունը, հնարավորություն տվեց, որպեսզի մարդը ոչ միայն ազատ ապրելու իրավունքը տնօրինի, այլ միաժամանակ ձեռք բերի ներքին ազատություն: Այս սերունդը միաժամանակ ապրեց հասարակարգի վերափոխման շրջան: Խորհրդային տարիներին մարդու ազատությունները, իրեն ազատորեն դրսևորելու հնարավորությունները կաղաքարված էին: Նոր սերունդը հնարավորություն ունեցավ պայքարի միջոցով ձեռք բերել նաեւ այդ ազատությունը: Իհարկե, մենք դեռ այս ասպարեզում բավականին աշխատանքներ ունենք կատարելու, որովհետեւ մարդու ներքին ազատությունից է կախված նաեւ հասարակության լիաթոք զարգացման, առաջնացիկ քայլեր կատարելու գործընթացը: Կարծում եմ, որ այս առումով Արցախյան շարժումը նպատակավոր հող ստեղծեց, եւ մենք պարտավոր ենք այդ գործընթացն ավելի խորացնել, զարգացնել եւ հասնել մեր հիմնական նպատակին:



Ղարաբաղյան շարժումը եւ ազատամարտը լուսաբանող լրագրող, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար, ՀՀԿ անդամ Սերգեյ Շահվերդյան

Երբ խոսում ենք Արցախյան շարժման մասին, որպես թիվ մեկ հաղթանակ՝ պետք է ընդգծենք համազգային միասնականության մթնոլորտը, որը ձեւավորվել է Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրվանից: Ղարաբաղյան շարժումն է մի գաղափարի շուրջ համախմբել հայությանը: Ու միասնականության բնական հետեւանքը եղավ հաղթանակ, քանի որ՝ երբ ամբողջ ազգը միավորվում է մեկ գաղափարի շուրջ, այդ գաղափարը հաղթում է: Սարդարապատի ճակատամարտից եւ Հայաստանի Առաջին Հանրապետության ձեւավորումից հետո հայ ժողովուրդն այդպիսի հաղթանակ չի ունեցել: Ղարաբաղյան շարժումն առաջին դեպքն էր, երբ մենք սկսեցինք ընդլայնել մեր տարածքները: Ղարաբաղյան շարժման արդյունքում ունեցանք ոչ միայն ազատագրված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, այլ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որը երեք անգամ ավելի տարածք ուներ, քան այն տարածքը, որտեղ ծնվել է Ղարաբաղյան շարժումը:

Ցավոք, հետագա տարիներին մենք չկարողացանք պահպանել միասնականության ոգին, էլ ավելի զարգացնել ու ամրապնդել մեր հաղթանակը՝ ստեղծելով ավելի լավ, ավելի բարեկեցիկ, ապրելու համար ավելի հարմար հայրենիք: Դա երեւի թե մեր ամենամեծ բացթողումն էր, որ մենք չկարողացանք ամրագրել այդ հաղթանակը: Մենք չստեղծեցինք այդ երազանքների հայրենիքը, որտեղ մարդն արժանապատիվ կհամարեր ապրել: Մենք բոլորս ենք պատիվ համարում ապրել հայրենիքում, բայց մեր հայրենիքը պետք է լիներ այնպիսին, կլինի այնպիսին, որ ամբողջ հայրենիքը ցանկանա վերադառնալ իր նախնիների հողը: Սա իմ պատգամն է ապագայի համար:

«ԱՊՐԱՍԺ»

Կառավարության գործունեությունը 2017-ին

Ամփոփիչ ասուլիսներ

2 ← Նյութական արտադրության հիմնական ոլորտներում արձանագրվել են հետեւյալ ցուցանիշները՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ շուրջ 84.0 մլրդ դրամ՝ 2016 թվականի համեմատ իրական արտադրությանը աճելով ավելի քան 30.0 տոկոսով, շինարարության ծավալը՝ շուրջ 53.0 մլրդ դրամ՝ ապահովելով աճ ավելի քան 16.0 տոկոսի չափով, իսկ գյուղատնտեսության արտադրանքի ծավալը՝ շուրջ 75.0 մլրդ դրամ՝ 2016 թվականի համեմատ աճելով շուրջ 10 տոկոսի չափով:

Խոսելով 2018 թվականի պետական բյուջեի մասին՝ Գրիգորի Մարտիրոսյանը նշել է, որ 2018թ. պետական բյուջեի վրանշակված նախագծի համաձայն՝ պետական բյուջեի վերջնական ցուցանիշներն են. եկամուտներ՝ 96 մլրդ 428.2 մլն դրամ, ծախսեր՝ 101 մլրդ 538.8 մլն դրամ, դեֆիցիտ՝ 5 մլրդ 110.6 մլն դրամ:

«Կարեն Շահրամանյանն ամփոփել է 2017 թվականը 30 հունվարի 22-ին ԱՀ քաղաքաշինության նախարարության նիստերի դահլիճում տեղի է ունեցել նախարար Կարեն Շահրամանյանի մամուլի ասուլիսը: Նախարարն ամփոփել է 2017 թվականի ընթացքում նախարարության կողմից իրականացված աշխատանքները եւ ներկայացրել 2018-ի անելիքները:

2017 թվականին Արցախում ճանապարհաշինության ոլորտում ծախսվել է շուրջ 4 մլրդ դրամ գումար: Ստեփանակերտում կատարվել են մի շարք փողոցների եւ բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ:

«Բարեկարգման եւ ասֆալտապատման աշխատանքներն ավարտվել են Ստեփանակերտի Մխիթար Սպարապետ, Սլավա Կասպարով, Շիրվանզադե, Գարեգին Նժդեհ, Հակոբ Հակոբյան, Կարո Ավարյան, Հեքիմյան, Արզանյան փողոցներում, Վազգեն Սարգսյան 20, Խակոբյի 4ա շենքե-

րի բակերում, ինչպես նաեւ Առաքել Առաքելյան փողոցի մի հատվածում», -մանրամասնել է Կ. Շահրամանյանը:

2017 թ. կապիտալ ներդրումների ծրագրով բնակարանաշինությանը հատկացվել է 2343,948 մլն դրամ: 2017 թվականին Սարուշեւում, Զարին Տակում, Մոխրաթաղում եւ Շուշիում շահագործման է հանձնվել 4 մանկապարտեզ:

«Պետք է անենք ամեն ինչ, որպեսզի Արցախում բացառելով անորակ շինարարությունը, -ընդգծել է Կ. Շահրամանյանը:

ԱՀ առողջապահության նախարար Կարինե Աթայանը հանդես է եկել մամուլի ասուլիսով

30 հունվարի 25-ին ԱՀ առողջապահության նախարար Կարինե Աթայանը հրավիրել է մամուլի ասուլիս՝ հանրությանը ներկայացնելու 2017 թվականին կատարված կողմից կատարված աշխատանքները եւ 2018-ին նախատեսվող ծրագրերը:

«Յտեւողական աշխատանքների շնորհիվ, համագործակցելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ, ինչպես պետական աջակցությամբ, այնպես էլ բարեգործական հիմունքներով համակարգի բժիշկ-մասնագետները մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար վերապատրաստվում են Հայաստանի Հանրապետության ու արտասահմանյան տարբեր երկրների կլինիկաներում», - ասել է Կարինե Աթայանը՝ նշելով, որ 2017 թվականին Հայաստանի Հանրապետության տարբեր բուժօգնականներում վերապատրաստվել է համակարգի 53 բժիշկ եւ 5 բուժքույր: Բժիշկներից 3-ը վերապատրաստում անցել են արտասահմանյան երկրներում:

Խոսելով ձեռքբերումներից՝ նախարարն առանձնացրել է «Ուռուցքաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական

ընկերության սոր շենքի շինարարությունը, շահագործման հանձնված «Հակապալարախտային դիսպանսեր» պետական ոչ առետորային կազմակերպության հիվանդանոցային մասնաշենքը, «Քաշաթաղի շրջանային բուժփակուրում» պետական ոչ առետորային կազմակերպության Իշխանաձորի գյուղական բժշկական ամբուլատորիայի շենքը:

Արարատ Դանիելյանն ամփոփել է 2017 թվականը

30 հունվարի 26-ին տեղի է ունեցել ԱՀ արդարադատության նախարար Արարատ Դանիելյանի մամուլի ասուլիսը, որի ժամանակ ներկայացվել է նախարարության եւ նրա ստորաբաժանումների կողմից 2017 թվականին կատարված աշխատանքները:

Նախարարը նախ անդրադարձել է շարունակական բնույթ կրող Արցախի Հանրապետության օրենսդրության կատարելագործման, դատաիրավական համակարգի եւ իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ նշելով, որ 2018 թվականը օրենսգրքի մշակման եւ վերջնական տեսքի բերման հարցում լինելու է բեկումնային:

«Հաշվետու տարում մասնակցել եմ ԱԺ լիազումար եւ ԱԺ հանձնաժողովի նիստերին՝ ներկայացնելով Սահմանադրության պահանջներից բխող եւ մի շարք այլ օրենքների նախագծերի փաթեթներ, տվել եմ պարզաբանումներ պատգամավորների կողմից հնչեցված հարցերի շուրջ», - նշել է Ա. Դանիելյանը:

2017 թվականին նախարարության առջեւ դրված կարեւորագույն խնդիրներից է հանդիսացել մարդու իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանության իրականացումը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը եւ համակարգի ստորաբաժանումների գործունեության բարելավումը:

«ԱՊՐԱՍԺ»

Բաքվի հայ բնակչության հունվարյան շարժեր՝ 20-րդ դարավերջի ցեղասպանության ակտ



Ահա 28 տարի շարունակ՝ մեր ժողովուրդն անանց ցավի ու կսկիծի զգացումով անդրադառնում է իր նորագույն պատմության ողբերգական իրադարձություններից մեկին՝ Բաքվի հայ բնակչության 1990թ. հունվարյան շարժերին, ոգեկոչում ազգային ատելության ու անհանդուրժողականության հողի վրա իրականացված այդ զանգվածային եղեռնագործության կամ, միջազգային իրավական եզրույթով էթե բնորոշենք, ցեղասպանության հազարավոր անմեղ գոհերի անմոռաց հիշատակը:

Բաքվի 1990թ. հունվարյան, ինչպես եւ Սումգայիթի 1988թ. փետրվարյան, ապա եւ այդ հանրապետության ավելի քան կես միլիոն հայ ազգաբնակչության շարժերը, բռնատեղահանումները, գույքի եւ ամենայն ինչքի բռնագրավումները, փաստորեն, տրամաբանական զարգացումն ու շարունակությունն էին հայության բնաջնջման, արտաքսման այն հետեւողական քաղաքականության, որը միեւնույն ձեռագրով իրականացվել էր Օսմանյան թուրքիայի տիրապետության, ապա եւ քեմալական իշխանությունների ու գազազած մոլեռանդ թուրք-թուրքական ամբոխի համատեղ ջանքերով: Երկու պարագայում էլ՝ ինչպես թուրքական, նույնպես եւ ադրբեջանական, հավասարապես ցեղասպան իշխանությունների հետապնդած նպատակը մեկն էր՝ Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին ամենայն գնով վերացնել այն արգելապատնեշը, որպիսին Ստամբուլ-Անկարան ու Բաքուն տեսնում էին եւ առ այսօր էլ դիտարկում են՝ հանձնիս հայ ժողովրդի: Հայության համար գոյատևումն իր պատմական բնօրրանում, չնայած բոլոր այն անմարդկային պայմաններին ու տառապանքներին, որոնց մեջ անողոք ու անարդար ճակատագրի բերումով նա հայտնվել էր թե դարասկզբին եւ թե դարավերջին, իրականում այն ոսկորն էր, որ խրվել, մնացել էր թուրքական եւ ադրբեջանական իշխանությունների կոկորդում եւ ինչից ազատվելու համար խտրականություն չէր դրվում միջոցների միջեւ՝ առաջնորդվելով՝ նպատակն արդարացնում է միջոցները սկզբունքով, անտեսելով, քամահրելով միջազգային կարծիքը եւ դարձյալ միջազգային իրավական նորմերը՝ առանց հետագա պատասխանատվության որեւէ վտանգի ու վախի զգացողության:

Արդյո՞ք միջազգային հանրությունը պատասխանատվության ենթարկեց, պատժեց երիտթուրքական եւ ապա քեմալական իշխանություններին ավելի քան երկու միլիոն հայերի բնաջնջման համար՝ ինչպես Օսմանյան Թուրքիայի տարածքում եւ Արեւմտյան Հայաստանում, ապա եւ Բաքվում՝ 1918թ. սեպտեմբերին, ապա եւ Արցախի Շուշի քաղաքում եւ մերձակա հայկական գյուղերում, 1920-ի մարտին՝ թուրք-թաթարաքրդական համատեղ ուժերով: Բացարձակապես: Միջազգային հանրությունն այսօր էլ՝ այդ արյունալի իրադարձություններից մեկ դար եւ կամ, էթե ըստ հաջորդականության դիտարկենք, գրեթե մեկ դար անց քար անտարբեության մեջ է նայում թուրքական պետության այդ հակամարդկային քաղաքականության դրսեւորումներին ու որպես դրանց ծանր հետեւանք՝ հայ ժողովրդի ապրած ողբերգություններին: Արձանագրենք՝ ընդամենը երկու տասնյակ պետություն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը ու մի քանի միջազգային կազմակերպություն:

Արդյո՞ք նույն այդ միջազգային հանրությունը միանշանակ դատապարտեց Ադրբեջանի իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը դարավերջին: Մեծ հաշվով՝ դարձյալ ոչ:

Եթե չհաշվենք, որ 1990-ի հունվարի 17-ին Եվրա-

խորհրդարանը բանաձեւ էր ընդունել՝ ԱԳ Նախարարների կոմիտեին եւ Եվրախորհրդին կոչ անելով պաշտպանել հայերին խորհրդային կառավարության հակաօրինական գործողություններից եւ պահանջելով անհապաղ օգնություն ցուցաբերել Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին: Եվ կամ հաջորդ օրը՝ հունվարի 18-ին, ԱՄՆ մի խումբ սենատորներ համատեղ նամակ են հղել խորհրդային Միության առաջնորդ Միխայիլ Գորբաչովին՝ անհանգստություն արտահայտելով Բաքվում հայերի շարժերի կապակցությամբ եւ կոչ անելով Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին:

Եթե չհաշվենք, որ նույն այդ անփառունակ պետական-կուսակցական գործիչը հայտարարում էր, թե Բաքվում իրադարձությունները ողբերգական բնույթ են ստացել՝ «շարժեր, սպանություններ, անմեղ մարդկանց իրենց բնակարաններից հանում եւ արտաքսում են», բայց, միեւնույն ժամանակ, ինչպես Սումգայիթի դեպքում էր, խուսափում էր իրերն իրենց անուններով կոչել:

Եթե չհաշվենք, որ Բաքվի շարժերից շուրջ մեկուկես ամիս անց՝ մարտի 29-ին, այդ առնչությամբ կայացել է ԽՍՀՄ ԳԽ խորհրդի փակ նիստ, որտեղ միութենական բարձրագույն ղեկավարությունը, ի պատասխան ադրբեջանական պատվիրակության հարցապնդման, այն է՝ ստեղծել հանձնաժողով խորհրդային զորքը Բաքու մոտեցնելու եւ նրա գործողությունները հետաքննելու համար, ներկայացրել է արյունալի իրադարձությունների այնպիսի մանրամասներ, որոնք այդպես էլ չեն լուսաբանվել մամուլում, եւ արդյունքում, փոխադարձ համաձայնությամբ, հանձնաժողով չի ստեղծվել, իսկ հայերի շարժերը մատնվել են հանցավոր մոռացության: Ահա ընդամենը կամ գրեթե ընդամենն այդքանը:

Միջազգային հանրությունը, անտեսելով մարդկության հանդեպ ուղղված այդ ոճրագործություններին իրավական գնահատական տալու եւ ոճրագործներին խստորեն պատասխանատվության ենթարկելու հրամայականը, փաստորեն, այսպես ասած, դանդաղ գործողության ակն է դրել իր իսկ եւ իր միջոցով ամբողջ մարդկության ոտքի տակ:

Այլապես, հազիվ թե նացիստական Գերմանիան ձեռնարկեր հրեա ժողովրդի ցեղասպանությունը եվրոպական երկրներում՝ հրեական Յոլոքոստը: Տեղի չէր ունենա Կամբոջայի ժողովրդի ցեղասպանությունը, որ իրականացրել էր այդ երկրի կոմունիստական կազմակերպությունը: Կլասսեցվոր Սուդանի արյունահեղությունը՝ տեղի բնակիչների եւ արաբախոս բնակչության միջեւ զինված բախումների հետեւանքով: Իսկ ցեղասպանությունները շարունակում էին հաջորդել իրար՝ Խորվաթիա, Բոսնիա, Կոսովո, Ներկայումս՝ Սիրիա եւ Իրաք:

Եթե խորհրդային կենտրոնը՝ Մոսկվան, ի սկզբանե խստորեն դատապարտեր Սումգայիթի փետրվարյան շարժերը, ապա հազիվ թե դրանք կրկնվեին Կիրովաբադ-Գանձակում, Շամխորում, Շամախիում ու Նուխիում, Բաքվում, Ադրբեջանի մյուս բնակավայրերում, իսկ 1992-ի ապրիլին՝ նաեւ Արցախի Մարաղա գյուղում: Վերջապես՝ խորհուրդների երկրում դժվար թե արձանագրվեին զանգվածային արյունահեղության փաստերը Ֆերգանայում, Դուշանբեում, Նովի Ուզբեկում, Օշում:

Իրականում ամեն ինչ ինքնահոսի է մատնվել: Բայց ոչ ակամա, ոչ անփութորեն, այլ՝ նպատակային հանցավորությամբ: Հիշենք Ադրբեջանի կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Վեդիբոկի արձագանքն արձակագիր Յուսիֆ Սամեդովի ահազանգին, թե շաբաթ օրը, հունվարի 13-ին Բաքվում հայերի մեծ շարժ է սպասվում: «Ոչինչ, թող տղաները մի քիչ լիցքաթափվեն», - անհոգ պատասխանել է նա: Իսկ շարժերի օրը՝ հունվարի 13-ին, հանդիպելով Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺԾ) ակտիվի հետ, ինչը հեռարձակվել է հանրապետական հեռուստատեսությամբ, նա ասել է. «...Մեր թշնամիներին մենք մեր ճանապարհից պիտի սրբենք, ինչպես Լեռնային Ղարաբաղի մարզկոմը սրբեցինք, ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ կոմիտեն եւ շատ ուրիշները...»: Անշուշտ, հիշում եք, Բաքվի շարժերից մեկ օր առաջ էր, երբ Գորբաչովը չարագուշակ հայտարարություն արեց, ասելով. «Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման պահանջը անխուսափելիորեն հարցականի տակ կդնի Բաքվի 250 000 հայերի ճակատագիրը»: Արդյո՞ք հայերի եղեռնը սանձազերծելու ազդանշան չէր դա:

Այս համատեքստում եւս մեկ իրողություն, որի մասին ակնարկել է հանրահայտ Ջորջ Սորոսն իր «Գորբաչովի հայեցակարգերը» գրքում: Իրականությունից այնքան էլ հեռու չեն ենթադրություններն առ այն՝ նշել է նա, թե հայկական շարժերն Ադրբեջանում ներշնչված են եղել

տեղական մաֆիայի կողմից, որին ուղղորդում էր Ադրբեջանի ՊԱԿ-ի նախկին ղեկավար Յեյդար Ալիեւը, ով նախապես տեղյակ էր այդ ամենին եւ առանց որի ոչինչ չէր արվում Ադրբեջանում:

Ու սկսվեցին խորհրդային տարիներին նախադեպը չունեցած հայերի կոտորածները, որոնք իրագործվեցին Ադրբեջանի ազգայնական ու կուսակցական-կառավարական մաֆիայի (կոմկուսի կենտկոմ, ՊԱԿ, ԱԺԾ) կողմից՝ հենվելով խաժամուժի վրա եւ, անշուշտ, Կրեմլի հանցավոր թողտվությամբ: Միայն խորհրդային գործերի գրեթե մեկշաբաթյա ուշացումով Բաքուն գրոհելուց հետո է, որն իրականացվեց ոչ այնքան անպաշտպան հայ բնակչությանը սատարելու, որքան Ադրբեջանում խորհրդային իշխանության տապալումը կանխելու նպատակով, փրկվեցին ողջ մնացած հայերը: Մի քանի օրվա ընթացքում՝ հունվարի 13-ից մինչեւ 20-ը, Բաքուն լիովին հայաթափվեց:

Որքան էլ տարօրինակ թվա, Բաքվի հայկական շարժերի գոհերի թիվն անորոշ է առ այսօր, թեկուզ, ինչպես Սումգայիթի պարագայում է, շրջանառվում են տարբեր թվեր: Արդյո՞ք հնարավոր է գտնել մոտավորապես ճշտել Բաքվում նահատակված մեր հայրենակիցների թվաքանակը: Ըստ ակադեմիկոս Չիա Բունիաթովի՝ Բաքվում 9000 հայ է զոհվել, Սումգայիթում՝ 700: Թե որքանով է դա ստույգ՝ այսօր դժվար է ասել, քանզի շարժերի հետեւանքով մահացածության փաստերը յոթը կողպեքի տակ են պահվում Ադրբեջանի արխիվներում, առավել եւս, որ նահատակվածների դիակները շուտափույթ ցրել էին Բաքվի եւ շրջակա բնակավայրերի դիարաններում, իսկ հետագայում՝ գիշերները, մթության քողի տակ հորձածով արել Ապշերոնի թերակղզու ամայի տարածքներում: Բայց երեւի թե հիմք չունենք չհավատալու Սումգայիթի ու Բաքվի հայոց կոտորածների ամենակտիվ կազմակերպիչներից մեկին, ով տիրապետում էր առկա փաստերին: Ի դեպ, ԽՍՀՄ ՆԳՍ օպերատիվ քննչական խմբի շտաբի պետ Վիկտոր Կրիվոպուսկովը Սումգայիթի պարագայում համարյա նույն է ասում իր «Խռովակ-հույզ Արաբադ» փաստավավերագրական գրքում՝ նշելով, որ Սումգայիթում սպանված հայերի թիվը մի քանի հարյուրի է հասնում: Սա նշանակում է, որ Բունիաթովի բերած թվերը, ամենայն հավանականությամբ, մոտ են ճշմարտությանը:


Ընդունված է ասել, որ Բաքվի հայ բնակիչների հունվարյան, ինչպես որ, առհասարակ, Ադրբեջանի հայության շարժերն այդ հանրապետության իշխանությունների պատասխանն էր Ղարաբաղյան շարժմանը՝ Մայր հայրենիքի հետ վերամիավորվելու արցախահայության ձգտումներին: Այո, դա այդպես է: Բայց եթե 1987-1988թթ. հերթական անգամ վերածնունդ չապրեր մեր շարժումը, արդյո՞ք այդ խորհրդային հանրապետության պետականակիր հայ ազգաբնակչությունը հետագայում կխուսափեր նման դառը ճակատագրից: Հաստատապես՝ ոչ: Ոչ, քանզի մինչ այդ՝ Լեռնային Ղարաբաղը ՌԿ(Բ)Կ կոմբյուրոյի ապօրինի որոշմամբ Ադրբեջանական ԽՍՀ-ին բռնակցելու ժամանակաշրջանից ի վեր՝ Արեւմտյան Մերձկասպիայի այդ տարածքի հայության գլխին ի սկզբանե ուղվականի պես չարագուշակ սավառնում էր բնաջնջման եւ արտաքսման հեռանկարը, ինչպես դա համաժամանակ՝ յոթանասուն տարի շարունակ տեղի ունեցավ հայկական Նախիջևանում, ինչպես դա մինչ այդ տեղի ունեցավ Արեւմտյան Հայաստանում՝ անցած դարասկզբին: Կրկնում են՝ հայ ժողովուրդն իր պատմական բնաշխարհով իրականում այն ոսկորն է, որ Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին խրվել, մնացել է թուրք-ադրբեջանական իշխանությունների կոկորդում եւ ինչից վերջնականապես ազատվելու գաղափարը եղել ու շարունակում է մնալ ռազմավարական հրամայական պատմական բախտի քմահաճույքով մեզ սահմանակից դարձած այդ թշնամական պետությունների համար:

Իսկ հետագան՝ կարող եք հարցնել: Հետագան, համոզված եմ, առավել քան ցայտուն ու հաստատուն ամփոփված է Մեծն բանաստեղծի՝ Յովհաննես Ծիրազի «Եքսպրոմոս» պոեմի ահա այս տողերում, ինչով եւ ցանկանում եմ ավարտել խոսքս.

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:*

Սիբայել ՀԱՋՅԱՆ

Արգամ Հարությունյանը՝ Շոշի Ազուն, կդառնար 50 տարեկան



Հունվարի 15-ին լրացել է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկ, ՀՀ անդամ, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ Շոշի Ազունի՝ Արգամ Հարությունյանի ծննդյան 50-ամյակը:

Արգամ Հարությունյանի 50-ամյակին նվիրված միջոցառմանը ներկա էին ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար Լեւոն Մաքսյանյանը, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԱԺ պատգամավորներ Ժաննա Գալստյանը, Լեւոնիկ Հովհաննիսյանը, հերոսի հարազատները, մարտական ու զարգացման ղեկավարները, զինվորականներ, ՀՀ ԱԿՄ-ի անդամներ:

ԱՀ ՊԲ N զորամասի հրամանատար, գնդապետ Արտյոմ Առաքելյանը բարձր է գնահատել Արգամ Հարությունյանի ավանդը Արցախյան ազատագրական շարժման ընթացքում՝ առանձնացնելով նրա հրամանատարական, զինվորական, ղեկավարական հատկանիշները: «Բացառիկ արժանիքներով օժտված անձնա-

վորություն էր Արգամ Հարությունյանը: Շոշի Ազունի հետ պատիվ ունեցա մասնակցելու մի շարք մարտական գործողությունների: Նրա ներկայությունն արդեն իսկ բավական էր, որպեսզի միանգամից փոխվեր մթնոլորտը: Շոշի Ազունի անունը ոսկե տառերով գրվեց Արցախյան գոյապայքարի տարեգրության մեջ»,- իր ելույթում ասել է Արտյոմ Առաքելյանը:

Արգամ Հարությունյանի ուսուցիչ Վիտյա Յարամիչյանը իր խոսքում նշել է, որ անչափ ուրախ ու հպարտ է Արգամ Հարությունյանի համագյուղացին, ուսուցիչը, ինչպես նաև նրա ստեղծած վաշտի շարքային զինվորը լինելու համար:

«Հասկանալու համար, թե ինչն է ազդում անհատի հոգեկերտվածքի վրա այնպես, որ նա մեծանա ու համագյուղին նշանակության հերոս դառնա, պետք է դիտարկել բոլոր այն գործոնները, որոնք նշանակություն են ունեցել նրա կյանքում: Իմ կարծիքով՝ առաջինը հարազատ ընտանիքն է: Հարությունյանների ընտանիքը մեր գյուղում հայտնի է որպես ամենակազմակերպված, ամենապարկեշտ, ամենագեղեցիկ ընտանիքներից մեկը: Ցավոք, ընտանիքը շուտ է զրկվել հորից, եւ գուցե դա է եղել պատճառը, որ Արգամի մոտ շատ արագ ձեւավորվել են տղամարդուն բնորոշ կարեւոր հատկանիշները՝ հուսալիություն, դիմադրողականություն, առնականություն, ազնվություն, ընկերակալություն»,- ասել է Վիտյա Յարամիչյանը՝ ավելացնելով, որ Արգամի վառ անհատականության համար պարտական ենք նաև արմատներին, տոհմածառին, միջավայրին եւ տվյալ ժամանակաշրջանին:

Շոշի Ազուն կանգնած է Կենտրոնա-

կան պաշտպանական շրջանի կազմավորման ակունքներում եւ նրա շարքերում հաղթականորեն կերտել է իր մարտական ուղին:

Արցախի ազատամարտիկների միության աշխատակազմի ղեկավար Էդիկ Խաչատրյանը նշել է, որ հերոսի անցած մարտական ճանապարհը նոր սերնդի համար դարձել է հավատի, ոգու եւ միասնական պայքարի պայծառ խորհրդանիշ: «Ազատամարտի նվիրյալ Արգամ Հարությունյանը, մասնակցելով ազատագրական եւ պաշտպանական մարտագործողություններին, նշանակալի ներդրում ունեցավ Արցախյան գոյապայքարի տարեգրության մեջ: Այսօր նա կդառնար 50 տարեկան, բայց նրա կոչումն ու առաքելությունն այլ էին. նա սեփական կյանքի գնով փրկեց հող-հայրենին՝ ազատագրեց հայոց ոստան Արցախը»:

«Ապրիլյան դիմակայության օրերին մեր սերունդն ապացուցեց, որ արժանի իրավահաջորդն է ավագ սերնդի: Վստահեցնում են Ձեզ, որ մենք այսուհետ մի թիզ հող անգամ չենք տա թշնամուն, քանի որ այն շաղախված է մեր հայրերի ու եղբայրների արյամբ»,- ելույթում ասել է Արգամ Հարությունյանի անունը կրող վաշտի զինվոր Նարեկ Մանուկյանը:

Արգամ Հարությունյանի մայրը՝ տիկին Թամարան, չկարողանալով գապել հուզմունքը, շնորհակալություն է հայտնել որդու մեծարժան միջոցառման կազմակերպման համար, մաղթել, որ այսուհետ ոչ մի մայր, ոչ մի հարազատ իր տեսածը չտեսնի, ու հարատեւ խաղաղություն լինի:

Արգամ Հարությունյանի 50-ամյակին նվիրված միջոցառմանը ելույթ են ունե-

ցել նաև հերոսի հարազատ կրթօջախի սաները: Միջոցառման վերջում կայացել է հերոսին նվիրված «Նվիրյալները. Արգամ Հարությունյան (Շոշի Ազուն)» ֆիլմի ցուցադրությունը:

Արգամ Հարությունյանը ծնվել է 1968թ. հունվարի 15-ին, Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1986-1988-ին ծառայել է խորհրդային բանակի դեսանտային զորքերում:

1990-ին կազմավորել է Շոշի պարտիզանական ջոկատը (հետագայում՝ վաշտ): Այնուհետեւ միացվել է Ա. Ղուլյանի (Բեկոր) 1-ին վաշտին, որի հիմքի վրա 1992 թ. սեպտեմբերին ձեւավորվել է Կենտրոնական պաշտպանական շրջանի 1-ին գումարտակը: Արգամը նշանակվել է գումարտակի շտաբի պետ:

1990-1994թթ. մասնակցել է Շոշի ծոբակի գյուղերի ինքնապաշտպանությանը, Տողի, Կրկմանի, Շուշիի ազատագրմանը, Շուշիի, Լաչինի, Մարտակերտի, Ֆիզուլիի շրջանների պաշտպանական եւ ազատագրական մարտական գործողություններին: Եղել է Շուշիի ազատագրման ուղղություններից մեկի՝ Շոշի ուղղության հրամանատարը:

1994 թ. մարտի 8-ին՝ Ֆիզուլիի պաշտպանության ժամանակ, Ազուն ընկավ ակակի պայթյունից: Հանգչում է Շոշ գյուղում, որտեղ կանգնեցվել է իր հուշարձանը:

Դեմսահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով եւ «Շուշիի ազատագրման» մեդալով: Ամուսնացած էր, ունի մեկ զավակ, ով այժմ Արցախի ՊԲ պայմանագրային զինծառայող է:

Տարեիկ ԱՐԱՁԱՆՅԱՆ

«Թեւանիկ» խումբը՝ Արցախի սահմանապահների եւ մանուկների կողքին

Հունվարի 25-26-ը Արցախի Մարտունու եւ Հաղորդի շրջանների զորամասեր եւ սահմանամերձ որոշ մանկապարտեզներ են այցելել Իրանում գործող «Թեւանիկ» խմբի, Հայ օգնության միության Արցախի միավորի, ՀՀ Արցախի երիտասարդական միության մի խումբ անդամներ: Նպատակը՝ առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների համար նախատեսված վերարկուները, կոստյումները եւ մանկապարտեզների սաների համար պատրաստված նվերները հանձնելն էր:

«Մենք գլուխ ենք խոնարհում բոլոր զինծառայողների առաջ: Մենք կամ աշխարհի որեւէ ծայրում ապրող հայերը՝ ինչ էլ անենք, մեր արածը ոչինչ է այն ամենի հանդեպ, ինչ անում են զինվորները, որովհետեւ մեր երեխաները, թոռները նրանց շնորհիվ են կարողանում ազատորեն ապրել, խաղալ»,- զինծառայողների հետ հանդիպման ասել է ՀՀ ՊԲ Արցախի միավորի անդամ Ռիտա Մաքսյանյանը:

Հաղորդ քաղաքի եւ Առաքել գյուղի մանկապարտեզներին են հանձնվել խաղալիքներ եւ այլ նվերներ:

Առաքել գյուղի մանկապարտեզի տնօրեն Նուշիկ Ղահրամանյանը շնորհակալություն է հայտնել նվերների համար՝ նշելով, որ գյուղը հիմնադրման օրվանից ի վեր միշտ զգացել է Սփյուռքում ապրող հայերի աջակցությունը:

Բացի վերոնշյալից, Բանակի օրվա առիթով ՀՀ ՊԲ Արցախի կառույցը մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների երեխաներին է հանձնել «Թեւանիկ» խմբի կողմից ուղարկված կապոցները եւ Ավստ-

րալիայում ապրող բարերարի տրամադրած դրամական պարգևները:

Արցախի սահմանն անառիկ պահող զինծառայողների համար ուղարկված հագուստը Իրանում ապրող հայ արհեստավորների ձեռքի աշխատանքն է: «Այն Իրանում հագուստի գործարանի տնօրենության կողմից տրամադրվել է «Թեւանիկ» խմբին, որը ՀՀ ՊԲ Արցախի կառույ-

թյան ժամանակ Արցախ այցելած մի խումբ իրանահայեր շատ են տպավորվել ու հուզվել՝ տեսնելով այստեղի ժողովրդի ուժեղ կամքը, եւ որոշել են ինչ-որ ձեւով օգտակար լինել Արցախում ապրողներին»,- տեղեկացրել է Նարեկ Իսրայելյանը:

Սկզբում խումբը սակավամարդ էր, բայց տարիների ընթացքում ավելի շատ



ցի միջոցով մենք երկու օրվա ընթացքում հանձնեցինք Արցախի զինծառայողներին»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է «Թեւանիկ» խմբի անդամ Րաֆֆի Զարիֆյանը:

Արցախ այցելած «Թեւանիկ» խմբի մյուս անդամը՝ Նարեկ Իսրայելյանը, արդեն 5-րդ անգամն է Արցախում եւ Իրանում գործող խմբի հիմնադրման ակունքներում է գտնվում: «4 տարի առաջ Մայիսի 9-ի առիթով կազմակերպված շրջագա-

մարդիկ են միացել եւ աշխատանքի ծավալներն էլ են մեծացել: Այժմ խմբի հետ համագործակցողների թիվը 300-ից անցնում է, ունեն գրասենյակ: Որպես խմբի անուն ընտրվել է Ջ. Ավետիսյանի նկարահանած համանուն ֆիլմի հերոսի անունը:

Սկզբնական շրջանում դժվարություններ կային՝ հատկապես սահմանային անցակետերում, բայց հիմա արդեն ամեն ինչ կարգավորվել է:

«Թեւանիկ»-ի նպատակներից է Արցա-

խում եւ Հայաստանում մանր բիզնեսի զարգացմանն աջակցելը: «Մենք ցանկանում ենք հնարավորություն տալ այստեղ բնակվողներին՝ աշխատել, մանր բիզնեսով զբաղվել: Դրա համար տեղում արտադրվող մեղրը, չրեղենը, ձեռագործ աշխատանքները ներկայացնում ենք Իրանում եւ ստացված շահույթն ուղարկում արտադրողներին»,- նշել է Նարեկը՝ հավելելով, որ նոր ծրագրերի համար ժամանակ է պետք:

Նախկինում մի քանի անգամ Արցախում շրջագայած, զորամասեր այցելած Նարեկն այժմ դրական շատ փոփոխություններ է տեսնում՝ «Տարիներ առաջ էլ եմ եղել զորամասերում, եւ, կարող եմ ասել, որ նախկինի հետ համեմատ՝ շատ բան է փոխվել: Հիմա ամեն ինչ ավելի կանոնակարգված, ավելի կազմակերպված է»:

Ամեն անգամ Արցախ գալով՝ երիտասարդները փորձում են շփումների, ուսումնասիրությունների միջոցով հասկանալ, թե ինչով կարող են օգտակար լինել: «Թեւանիկ»-ի աշխատանքն սկսվեց հագուստներ հավաքելով եւ ուղարկելով: Զանի որ տեղեկություններ քիչ ունեինք, հեռվից դժվար էր այստեղի յուրահատկությունները, խնդիրներն իմանալը: Եվ մեր այցերը հիմնականում ճանաչողական, տեղի խնդիրներին ծանոթանալու նպատակ ունեն,՝ նշել է Րաֆֆին՝ ավելացնելով, որ իրենք շատ լավ հասկանում են, որ ինչ էլ անեն, իրենց արածը շատ քիչ է զինվորների արածի հետ համեմատած,- Բայց մեր ուժերի, հնարավորությունների չափով ուզում ենք օգտակար լինել»:

«ԱՄՈՍՏ»

Հայերն իրավունք ունեն ապրել եւ արարել իրենց պատմական հողի վրա. Սան Պաուլոյի ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի նախագահ



Հագարավոր կիրովտորեր եւ տասնյակ երկրներ բաժանող Բրազիլիայի ու Արցախի միջեւ համագործակցության, Արցախի ու Հայոց ցեղասպանության ճանաչման, Սան Պաուլոյում ապրող 25-30 000 հայերի հիմնախնդիրների եւ Բրազիլիայի ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի նախագահ, իրավաբան Գեորգ Չատիկյանի հետ:

Բրազիլիայի ՀՅԴ Հայ Դատի գրասենյակը

ՀՅԴ Հայ Դատը Բրազիլիայում, Սան Պաուլոյում գործունեություն է ծավալում՝ սկսած 1985 թվականից: Բրազիլիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ հայնական ստաբիլացմանը տարածելու՝ Հայ Դատի հիմնական

նպատակներից բացի, մեր գրասենյակն այս տարիների ընթացքում գործունեություն է ծավալել նաեւ այլ ուղղություններով՝ հայապահպանության, երիտասարդական խմբերի կազմավորման, Համագային մշակութային միության եւ Հայ օգնության միության մասնաճյուղերի հիմնադրման:

Համագործակցությունն ու խոչընդոտները

Բրազիլիայի քաղաքական գործիչներից շատերը մեզ շատ լավ են ընդունում՝ քաղաքապետարանից մինչեւ սենատ եւ նախագահ: Սան Պաուլոյի հայ գաղութը հայտնի է որպես աշխատասեր եւ պատվով ժողովուրդ. մենք միշտ օգնել եւ գործունեություն ենք ծավալել ոչ միայն ի նպաստ մեզ, այլ նաեւ՝ Սան Պաուլոյի:

Հայերը Բրազիլիայում ունեն միայն մեկ խնդիր՝ ֆինանսի սակավություն: Ի տարբերություն հայերի՝ Արգենտինայում եւ Թուրքիայում ահռելի գումարներ են ծախսում եւ դժվարացնում մեր աշխատանքները: Թուրքական լոբբին թափ ստացավ հատկապես վերջին տարիներին, երբ մեր գրասենյակը ավելի մեծ թափով սկսեց աշխատանք տանել Արցախի անկախության ճանաչման ուղղությամբ:

Հայ համայնքի հիմնախնդիրները

Կառուցվածքային առումով հայերը խնդիր չունեն Բրազիլիայում: Այսօր Սան Պաուլոյում գործում են Սուրբ Գեորգ ամառապետական, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կաթոլիկ եւ ավետարանական եկեղեցիներ, «Արարատ» անունով են կոչվել իրապարակ, մետրոյի կայարան եւ կամուրջ:

«Արմենիա» իրապարակում կանգնեցված է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը: 1964 թվականից Սան Պաուլոյի համալսարանում գործում է հայագիտական ամբիոն, իսկ քաղաքի ռադիոկայանը հեռարձակում է նաեւ հայերեն հաղորդումներ, հայկական երգ ու երաժշտություն: Շուտով Բրազիլիայում կբացվի նաեւ Հայաստանի դեսպանատուն:

Մեր հիմնախնդիրը հայապահպանությունն է: Շատ ավելի հեշտ է հայ մսալ մի երկրում, որտեղ քո դեմ հակադրություն չկա, բայց երբ որ երկիրը քեզ շատ լավ է ընդունում եւ քո առջեւ բացում է բոլոր դռները, ժամանակի ընթացքում ձուլվում եւ նրանց մասնիկն ես դառնում: Մոռացվում է նաեւ հայոց լեզուն: Եթե սկզբում խոսելուց պորտուգալերեն մի քանի բառ ես օգտագործում, ապա որոշ ժամանակ անց հայերենն ընդհանրապես չես գործածում:

Բրազիլիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Թեեւ համացանցում տարածվել է այն տեղեկությունը, թե Բրազիլիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, սակայն պետք է հասկանանք, որ օրենքն ընդունվել է միայն սենատում եւ չի հաստատվել Ազգային ժողովի եւ նախագահի կողմից:

Այն, որ Բրազիլիան չի ընդունել Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենքը, փաստում է Բրազիլիայի Արտաքին գործերի նախարար, Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենքը առաջադրած Ալուիզու Նունեսի այցը Հայաստան՝ մասնավորապես Ծիծեռնակաբերդ, որտեղ Ա.Նունեսը նշել է, որ ցավա-

լի «դեպք» է տեղի ունեցել: Նա չի ասել, որ «ցեղասպանություն» է տեղի ունեցել: Եթե այդ օրենքն ընդունվեր, ապա Արտաքին գործերի նախարարը կնշեր «ցեղասպանություն» բառը:

Մենք եւ Բրազիլիայում Հայաստանի դեսպան Աշոտ Գալոյանը շարունակում ենք աշխատանքներ ծավալել այդ ուղղությամբ:

Արցախի Հանրապետության ճանաչում

Մենք գիտակցում ենք Արցախի անկախության ճանաչման անհրաժեշտությունը եւ կարեւորությունը: Շարունակական աշխատանք ենք ծավալում Բրազիլիայի պաշտոնյաների հետ: Նրանց պարբերաբար բերում ենք Արցախի եւ ծանոթացնում Արցախի հիմնախնդրի, պատմության, մշակույթի եւ առանձնահատկությունների հետ:

Բրազիլիայի եւ Արցախի միջեւ կարելի է համագործակցության եզրեր հաստատել՝ կրթական, առողջապահական եւ մշակութային ոլորտներում: Ինչպես Արցախը, այնպես էլ Բրազիլիան հայտնի են գինարտադրությամբ, եւ կարծում եմ, որ պետք է մտածել այդ ուղղությամբ:

Այդ, դժվարություններ կան, բայց աշխարհի մյուս կողմում մենք արժեւորում ենք մարդու իրավունքները եւ հասկանում ենք, որ ինչպես բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայերն իրավունք ունեն ապրել եւ արարել իրենց պատմական հողի վրա:

Գեորգ Չատիկյանի հետ գրուցել է Լուսինե ԹԵՎՈՅԱՆԸ

«Գլոբբինգ». մեկ տարի Արցախում

2017թ. հունվարից Ստեփանակերտում գործում է ամերիկյան «Գլոբբինգ» ընկերության Արցախի մասնաճյուղը, որի գլխավոր գտնվում է Հայաստանում: «Գլոբբինգ»-ը միջազգային գնումների հարթակ է, որը հնարավորություն է տալիս գնումներ կատարել ամերիկյան ու եվրոպական ցանկացած խանութից եւ երաշխավորված ստանալ գնումները: Գլոբբինգ՝ այսինքն գլոբալ, գործողություն է շուփիկ (Global, Action, Shopping): Ընկերության նպատակն ու առաքելությունն է աշխարհի բոլոր գնորդների համար ստեղծել գնումներ կատարելու հավասար պայմաններ՝ դրանով իսկ տալով նրանց հնարավորություն ապրել իրենց իսկ կանոններով: Անցած տարում «Գլոբբինգ» ընկերությունը միջազգային հարթակում գրանցել է մի շարք հաջողություններ՝ 325.216 առաքված գնում, 237,532 կգ ծանրոց, 2 նոր պահեստ՝ Չինաստանում եւ Գերմանիայում, 5 ինովացիոն ռոբոտացված սպասարկման սրահ: Այս հաջողություններից ամենամեծն է նաեւ ընկերության Արցախի գրասենյակը:

«Արդեն մեկ տարի է, որ աշխատում ենք եւ այդ մեկ տարվա ընթացքում հասցրել ենք արցախցիներին բացատրել մեր ծառայության բնույթը, որովհետեւ սկզբում հաճախորդները մեզ շփոթում էին այլ օնլայն խանութների հետ: Մենք օնլայն խանութ չենք, ապրանքներ չենք վաճառում, այլ հաճախորդներին հնարավորություն ենք տալիս օնլայն գնումներ կատարել: Արդեն ունենք պահեստներ Անգլիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Գերմանիայում եւ Ռուսաստանում», - նշել է «Գլոբբինգ»-ի Արցախի մասնաճյուղի համահիմնադիր տնօրեն Վահրամ Բաղդասարյանը:

Նրա խոսքով՝ մինչեւ բացվելը հաճախորդների ինչ-որ քանակ տեղյակ էր «Գլոբբինգ»-ի մասին, քանի որ այն արդեն գործում էր Հայաստանում: Բայց հաճա-

խորդների մոտ խնդիր էր առաջանում, երբ ծանրոցը հասնում էր Հայաստան. պետք է իրենց ընկերները, հարազատները Հայաստանի գրասենյակից ստանային, հետո ուղարկեին իրենց: Արցախի գրասենյակի բացումը այդ հաճախորդների համար հեշտացրեց «Գլոբբինգ»-ի ծառայություններից օգտվելը: «Գլխամասն ուրախությամբ է այստեղ մասնաճյուղ բացել, որպեսզի արցախցիներն էլ կարողանան օգտվել մանա ծառայություններից: «Գլոբբինգ»-ից



օգտվելով, արցախցի հաճախորդը ստանում է օնլայն գնումներ կատարելու նույն հնարավորությունները, ինչ ամերիկացին կամ եվրոպացին եւ կարողանում է միլիարդավոր տեսականուց ապրանք ընտրել՝ անհամեմատ մատչելի գներով:

«Հաճախորդը, գրանցվելով մեր կայքում, ստանում է իր անհատական գլոբբինգի հասցեները, մտնում օնլայն խանութ, գնում կատարում եւ առաքման հասցեում նշում մեր տրամադրած «Գլոբբինգ»-ի հասցեն: Տվյալ կայքը ծանրոց

առաքում է նշված հասցեում գտնվող մեր պահեստ, այդտեղից էլ մենք առաքում ենք Հայաստան ու Արցախ», - մանրամասնել է Վահրամ Բաղդասարյանը: Տրամադրելով փացեներ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ռուսաստանում, Չինաստանում եւ Գերմանիայում՝ ընկերությունը հնարավորություն է տալիս օգտվել արտերկրի բոլոր մեծ ու փոքր գեղեցիկից եւ ձեռք բերել ապրանքներ անհամեմատ ցածր գներով: Կարելի է լավագույն խանութների մշտապես թարմաց-

վոր ինքնուրույն գնումներ կատարելն է, մարդիկ կատարում են գնումները եւ օգտվում առաքման ծառայությունից: Երկրորդը՝ «Ձիթի իմ փոխարեն» տարբերակն է, որի պարագայում պարզապես ապրանքի հղումն են ուղարկում եւ գնումների մասնագետը իրականացնում է գնումը, կազմակերպում առաքման գործընթացը: Երրորդը «Ձի-շոփ» տարբերակն է, որի դեպքում ընկերության գնման մասնագետները գտնում, գնում եւ առաքում են հաճախորդի նախընտրած ապրանքը:

«2017թ. արցախցիներն առաջին անգամ կարողացան ավելի լայնորեն օգտվել արտասահմանյան օնլայն խանութների «Սեւ ուրբաթի» հետ կապված գեղեցիկից եւ նոր տարում ունենալ շատ ավելի օրգինալ նվերներ», - ասել է Վահրամ Բաղդասարյանը՝ հավելելով, որ Արցախից պատվերներ հիմնականում Անգլիայից ու ԱՄՆ-ից են կատարվում, իսկ Գերմանիայի եւ Չինաստանի պահեստները համեմատաբար նոր են բացվել:

Ինչ վերաբերում է 2018թ. ակնկալիքներին, ապա, ըստ Վահրամ Բաղդասարյանի, հաստատ նորություններ կլինեն, որովհետեւ մեկ տարվա ընթացքում հասկացել են, որ Արցախում պոտենցիալ կա ու արցախցիներն ուզում են օգտվել այս ծառայությունից: «Մենք միշտ մտածում ենք այնպես անել, որ մեր բոլոր հաճախորդները գոհ լինեն, ու առաջարկենք այնպիսի ծառայություն, որպեսզի նրանց համար ավելի հարմար լինի»:

Օնլայն գնումների նոր մշակույթ ձեւավորած ընկերության խորհրդանիշը Ջորջն երկարավիզ ընծուղտն է, որի անսովոր երկար պարանոցը խորհրդանշում է, որ հնարավոր է հասնել ամեն տեղ, կոտրել բոլոր սահմանները եւ գնումներ կատարել ողջ աշխարհից:

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Ոգեղեն Հայրենիք

Վահան Տերյանը եվ Հայկական հարցը



Ազգային բեկված կյանքի ճանապարհին Վահան Տերյանը մշտապես կանգնած էր հաստատ, ծանր մտորումներով, միացյալ, անկախ, հոգեւոր Հայաստանի վերակերտման համառ որոնումներով: Դա նա ապացուցեց թե՛ իր գրական, թե՛ քաղաքական գործունեությամբ: 1914 թ. Նվարդ Թումանյանին հղած նամակում գրում էր. «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու... Դուք երեւակայել չեք կարող, թե ինչպես է անցնում իմ կյանքը. ոչ թե անցնում է, այլ այրվում մի ներքին դառն կրակով, եւ ես անգոր եմ այդ կրակի դեմ ու անօգնական»:

Տակավին Թիֆլիսում սովորելիս տասներեքամյա Վահանը հաճախում էր ժամանակի ազգային-հեղափոխական պատանեկան միության՝ «Ծիածան»-ի ժողովներին: «Ամենահրատապ խնդիրը, - հիշում է Պ. Մակինցյանը, - որ ծեծվում էր այդ միջավայրում, Հայկական հարցն էր, տաճկահայերի դատն ու հեղափոխական շարժումը»: «Ծիածան»-ի առաջին նախագահը Ս. Շահումյանն էր, իսկ 1899-ից սկսած՝ Վահանի ավագ եղբայրը՝ Արամ Տեր-Գրիգորյանը: 1905 թ. ապրիլին «Ծիածան»-ի գաղափարակիր ընկերուհուն՝ Շվեյցարիայում գտնվող Ս. Օտարյանին, Տերյանը գրում է. «Անդրանիկի մասին գրածներդ ինձ շատ հետաքրքրում էին, եւ ես ուզում էի Ձեզ հայտնել նրա մասին՝ գիտենալով, որ նա այդտեղ է», իսկ մայիսի 6-ի նամակում խնդրում է. «Ուղարկեցե՛ք Անդրանիկի պատկերը, երեւի այդտեղ լավը հանած կլինեն: Շատ շնորհակալ կլինեմ»: 1905-ի նոյեմբերի 9-ի նամակում Ս. Օտարյանին Մոսկվայից հայտնում է. «Այստեղից Կովկաս է ուղարկվում մոտ ժամանակներս 200.000 ռուբլու գնեք: Եթե գնալու լինեմ, իհարկե, կարողացածիս չափ կտանեմ»: 1905 թ. դեկտեմբերին Տերյանն արդեն Կովկասում էր: Ճեմարանական ընկերոջ՝ Պ. Մակինցյանի հետ Թիֆլիսում անցնում է Դաշնակցության շարքերը, գործուղվում Շիրակի գյուղեր: Տերյանագիտության մեջ հաճախ շրջանցվել, ավելին, բացասվել է Տերյանի դաշնակցական լինելու փաստը: Տերյանի ընկերը՝ Ց. Խանգույանը, հիշում է. «1905 թ. դեկտեմբերին նրանք Կովկաս եկան ու Թիֆլիսում «քննություն» տալուց հետո գրկաբաց ընդունվեցին դաշնակցական պրոպագանդիստներ եւ ուղեւորվեցին Շիրակի շրջանը»: Նույն է փաստում Տերյանի գաղափարակիր ընկերը՝ Պ. Մակինցյանը. «Իր մերձավոր ընկերներից մեկի հետ անցնում է Շիրակ՝ հեղափոխական աշխատանք կատարելու նպատակով: Տերյանն անցնում է մոտ 40 գյուղ: Դոշավանքից անցնում է Անի, որ տեսնում է ձմեռ ժամանակ առաջին եւ վերջին անգամ»: Ինքը՝ Տերյանը, 1906 թ. Ս. Օտարյանին գրում է. «Թիֆլիսում մտա Դաշն. կազմակերպության մեջ իբրեւ պրոպագանդիստ: Մերոնք լավ են այժմ, բավականին զինված են: Մանավանդ «Դաշնակցությունը» մեծ դեր է խաղում եւ, իմ խորին համոզմունքով, եթե չլիներ նա, շատ տեղերում ոչ մի հայ չէր մնա: Թիֆլիսի ընդհարումների ժամանակ այնտեղ էի եւ աչքով տեսա Դաշնակց. կատարած գործը: Կովի մեջ Դաշնակց. հավասարը չունի, բայց պրոպագանդը շատ թույլ է»: 1906 թ. մարտի 20-ին Տերյանը Ա. Իսահանյանին հայտնում է, որ թարգմանել է Դաշնակցության ծրագիրը եւ ուզում է հրատա-

րակել: «Մի երեկոյթ էլ սարքեցինք ճեմարանում Դաշնակց. վերաբերյալ, եւ աշխատեցի ապացուցանել, որ Դաշն. սոցիալիստական կազմակերպություն է, եւ ծանոթացրի մեր մեծ աշակերտներին ծրագրին»: Նույն թվականին, սակայն, ընդհարվելով դաշնակցական մի խումբ հայդուկների հետ, Տերյանը հեռանում է Դաշնակցությունից: Դաշնակցության եւ Տերյանի ճանապարհները բաժանվում են՝ միաժամանակ օտարվելու եւ հակադարձվելու ընթացքով, իսկ հետագայում չընկալված դարձի դրամատիկ ավարտով: 1907 թ. Տերյանը գաղափարապես հարում էր արդեն սոցիալ-դեմոկրատներին, բայց նրա քաղաքական կողմնորոշման կիզակետում մշտապես մնաց միացյալ եւ ազատ հայրենիքի՝ Նաիրիի գաղափարը: Ազգային կյանքի հեռանկարներով մտահոգ՝ 1914 թ. «Մշակ»-ում հրատարակում է «Հոգեւոր Հայաստան» հոդվածը՝ նպատակ ունենալով «Հայության հավաքում կամ հայության կազմակերպում գաղափարական իմաստով»: Հոդվածում Տերյանը հաստատագրում էր նաեւ իր քաղաքական սկզբունքը Հայկական հարցի նկատմամբ. «Ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի թուրքահայերի ազատագրումով, ինչ ձեռով էլ լինի այդ ազատագրումը»:

Տերյանագիտության մեջ հակասական մեկնաբանությունների եւ տարակարծությունների առիթ է տվել նաեւ Տերյանը եւ կամավորական շարժումը հարցադրումը: Տերյանը հայկական կամավորական շարժմանը չգիտավորվեց. 1912 թ. նա ազատվել էր զինվորական ծառայությունից, 1917 թ. եւս՝ «աջ թոքի տուբերկուլոզի պատճառով ճանաչվելով միանգամայն ոչ պիտանի զինվորական ծառայության համար»: Պոետի համար ճակատագրական եղավ ամուսնությունը Սուսաննա Պախալովայի հետ 1911 թ.: Սուսաննան հիվանդ էր թոքախտով, Տերյանի մոտ հիվանդության ախտաշանները երեւում են 1912 թ.:



Պ. Մակինցյանը գրում է, թե Վահան Տերյանը «կամավորական շարժման հանդեպ բռնում է ժխտողական դիրք»: Ց. Խանգույանը Մակինցյանի վերոնշյալ տողերի լուսանցքում գրել է՝ Ընդհակառակը: Հուլիսի 19-ին Փորջեյանը եւս գրում է. «Հակառակ էր կամավորական շարժմանը, համարում էր այն վնասակար»: Ո՞րն է իրողությունը: 1915 թ. հուլիսին Տերյանը գրում է, թե չնայած մտքի առարկություններին, շատ էր ուզում կամավոր գնալ: Ի դեպ, կամավոր էր նաեւ նրա ավագ եղբայրը եւ գաղափարի նախկին ընկերը՝ Արամ Տեր-Գրիգորյանը: Մտքի առարկությունն այն էր, որ Տերյանը Հայկական հարցի լուծումը կապում էր ոչ թե ազգային-ազատագրական կամավորական շարժման, այլ Ռուսաստանի արմատական վերափոխման հետ. «Մենք չէինք կամենա, որ մեր ժողովուրդը ոտնատակ գնար այս շփոթ օրերում, որ նա զոհ լիներ սխալ գաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի եւ վերջը հուսահատության ու հիասթափության գիրկն ընկներ: Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը: Մեր խորին համոզումով՝ որքան եւ կարելու ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշե, վճռե հայության ապագայի վիճակը...»: Կամավորական շարժման նկատմամբ թերահավատություն, բայց նրա հերոսական ոգու արժան-

վուն գնահատում, միաժամանակ ազնիվ մտահոգություն ժողովրդի ֆիզիկական գոյության համար:

Տերյանագիտության մեջ թյուր դիտարկումներ են ամրագրվել նաեւ Տերյանը եւ Հայկական հարցը խնդրի շուրջ: Անգամ արժանահիշատակ Հ. Թամրազյանն է թյուր տեսակետ հայտնել՝ գրելով. «Խոր կսկիծով նա ասում է ավելին՝ եւ չեմ հավատում թուրքահայ հարցի ապագային»: Գրականագետի սույն դիտարկումը թերեւս հունի մեջ դնի Տերյանն ինքը, որի՝ սպիտակ թղթին հանձնված տողերից հարյուրամյակ անց էլ զգացվում է բանաստեղծի հոգեկան ծայրահեղ սրվածությունը դեպի ճակատագրական Հայկական հարցը. «Միթե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու. պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տեսնալ սրտի բոլոր զորությամբ եւ մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունլվիկ հարցը»:

Ազգային ճակատագրում կյանքի եւ մահվան խնդիր դարձած Հայկական հարցի վերապրումը Տերյանի կողմից, անթիվ հույսերի, ցնորքների, մտահոգությունների, կանխագագացումների եւ դատողությունների բեռնացումը նրա հոգեվիճակում հնարավորինս պատկերացնելու համար վերստին դիմենք Տերյանի՝ հակասական գնահատականների եւ բռն վճռերի արժանացած «Հոգեւոր Հայաստան» հոդվածին. «Արդեն թվում է, որ եթե անգամ այդ Հայաստան կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մենք դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավագին, մեզ համար մի տեսակ կրոնական գուևավորում ստացած այս խնդրով... Հայության համար մի ցավոտ ցնորք է դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց երկիր, դյուրական մի անուն: Բնական է դրա համար, որ մենք անկարող ենք այդ խնդրի մասին սառնասիրտ խոսել, հանգիստ մտածել: Ավելին կասեմ. մեզ մի տեսակ սրբապղծություն է թվում, երբ մարդիկ մեր ազգի՝ տարիներով ու տասնյակ տարիներով փայփայած գաղափարին մոտենում են սառը մտքով, անտարբեր գիտնականի ոճով... Թվում է, թե ոչ դիվանագիտական խճուճ հարաբերությունները, ոչ տնտեսական-հասարակական անսասան օրենքները, ոչ բնական անկարելիությունը չեն կարող դեմ կանգնել այդ միահոգի, մի-համուռ ու բորբոքուն տեսչանքին, այդ տարերային հեղեղի բնույթ կրող, ճակատագրական որոշմով կնքված ընթացքին: Այդ հոսանքի լոզունգը բացարձակ ու վճռական է, նրա դրոշակի վրա գրված է՝ «Դեպի Հայաստան»:

Վերադառնալով Հ. Թամրազյանի դիտարկմանը՝ նշենք, որ հիմքը թերեւս Տերյանի՝ 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում ընթերցած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունն էր, որի ընթացքում, եւս մի անգամ անդրադառնալով հայության ցավոտ խնդրին, Տերյանն ասում է. «Ես տաճկահայկական հարցի լուծմանը թուրքի սահմաններում չեմ հավատում: Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների... Տաճկաստանի վերածնությանը ես չեմ հավատում: Իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի եւ բաղձանքները նրա բաղձանքների հետ՝ ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»:

Տերյանի ազգային-քաղաքական դիմանկարի վերագնահատումը պահանջում է անդրադառնալ նաեւ Տերյանը եւ բուլշեվիկյան հեղափոխությունը հարցադրմանը: Հարցի հստակ մեկնաբանությունը կա. «Տերյանը, - նկատում է Հ. Թամրազյանը, - որոշ հակասություններով ընդունում եւ ըմբռնում է հեղափոխության մի շարք կողմեր, համակրանքով մոտենում այդ մեծ շարժմանը՝ նկատի ունենալով հատկապես ազգերի ազատագրության եւ անհատի բարոյական վերածնության խնդիրները»: Ազգային-քաղաքական հեռահար նպատակներով անդամակցելով բուլշեվիկյան կուսակցությանը՝ Տերյանը, այնուամենայնիվ, ի սկզբանե հաստատագրում էր գաղափարական որոշակի վերապահումներ. «Ես, ճիշտ է, համակրել եմ միշտ բանվորական գործին եւ եղած կուսակցութեանց մեջ քաղաքական եւ տնտեսական ծրագրերից ամենից շատ համակիր եմ եղել ս-դ-ի ծրագրին, բայց մարքսիստ չեմ բնավ աշխարհայացքի մտքով»:

Շարունակությունը՝ հաջորդ համարում: Հոդվածի ամբողջական տարբերակը տես «Ապառաժ»-ի էլեկտրոնային կայքէջում Նաիրինե Հովհաննիսյան, ք.գ.թ., դրոշմ

Պետականության վերականգնում 100

2018 թվականն առանձնանում է հիշատակման արժանի հոբելյանական ամյակներով, իսկ այդ ամյակներից կարեւորագույնը Հայոց պետականության վերականգնման 100-ամյակն է: Այս տարի մայիսի 28-ին լրանում է Հայաստանի Առաջին Հանրապետության ծննդյան 100-ամյակը:

Դարեդարձի այս առիթով 2018-ին հրապարակվող «Ապառաժ»-ի յուրաքանչյուր համարի մեկ էջը հատկացվելու է հայ ժողովրդի գաղափարների իրականացման՝ Հայոց պետականության վերականգնման շրջադարձային իրադարձության լուսաբանմանը: Էջում տեղ են գտնելու պատմական, վերլուծական հոդվածներ եւ հուշագրություններ, որոնք մեծ մասամբ անցյալ տարիների ընթացքում հրապարակվել են դաշնակցական մամուլում: Այս էջում տեղ կհատկացվի նաեւ Մայիսի 28-ի առիթով դաշնակցական գործիչների արտասանած ելույթներին: Էջում տպագրվող նյութերը տեղ կգտնեն նաեւ aparaj.am կայքէջում: «Ապառաժ»-ը սիրով կընդունի ընթերցողների առաջարկներն ու նյութերը «Պետականության վերականգնում 100» էջը առավել հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելու համար:

Հրաշափառ յարություն

Solում ենք վաթսուամեակը- Հայաստանի Հրաշափառ Յարություն: Solում ենք հայ ժողովրդի ազատության ու անկախության օրւայ տարեդարձը. Ազատության ու անկախության օրը ղարբնւեցին Սարդարապատով, Բաշ Ապարանով ու Ղարաքիլիստով, ծնունդ առան Հայոց Ազգային Խորհրդի յայտարարութեամբ եւ մարմին ստացան Հայաստանի Հանրապետութեամբ:

Եւ այս նաճունները, որ իրաւունքն ու հիմնական պահանջն է իւրաքանչիւր ժողովրդի ու ազգութեան, Հայ ժողովուրդը ձեռք բերեց ի գին ամենից դաժան նահատակութեան:

1918-ի Մայիս 28-ի հրաշքը, ընդհանուր թշնամու դէմ հայ ժողովրդի բոլոր զանգաւածների միասնական կամքի, ազգային գոյատեւման հաւաքական ու միահամուռ արտայայտութեան մէջ է կայանում, որ այդ ընթացումով օրհասական գուպարի ու գոյամարտի մէջ նետեց բոլորին անխտիր՝ արեւելահայ թէ արեւմտահայ, զինուոր թէ քաղաքացի, երիտասարդ թէ ծերունի, կին թէ երեխայ, բոլորին անխտիր, առանց սեռի, դասակարգի ու գաղափարաբանական խտրականութեան:

Եւ ալեհեր Արարատի հովանու ներքոյ հայկական դիւցազնադաշտերի վերածնեցին Բաշ Ապարանը, Ղարաքիլիսէն ու Սարդարապատը, ուր ընկած հերոսներին մենք պարտական ենք ինչ որ ձեռք բերեցինք ու ունեցանք այդ օրերին եւ ինչ որ ունենք մինչեւ այսօր, այսինքն՝ նախ Հայաստանի անկախ Հանրապետութիւնը եւ ապա Խորհրդային Հայաստանը, որ իբրեւ իրողական գոյութիւն շարունակութիւնն է առաջինի: Եւ որպէսզի աւելի քան համոզեցուցիք դառնայ այն անհերքելի ճշմարտութիւնը, որ աւերակած Հայաստանից եւ եղեռնի արհաւիրքն ապրած ու վերապրող խլեակներից ինչ գերբնական ճիգով ու երկաթէ կամով Արամներն Հայաշխարհի կերտեցին պետութիւնն ու պետականութիւնը Հայաստանի, այսօր, այս պատեհ առիթով պիտի ներկայացնենք վաւերական ու վիճակագրական փաստեր, որպէսզի պարզ լինի բոլորի համար, մանաւանդ՝ մեր նոր սերունի, թէ ինչ տարողութեամբ պետական վարչական կառոյց ունէր Հայաստանի Հանրապետութիւնը, որին եկաւ փոխարինելու Հայաստանի ներկայ վարչակարգը:

1918 Մայիս 28-ին, երբ հռչակեց Հայաստանի Հանրապետութիւնը, նորանկախ երկրի վարիչները դրեցին ծանրակշիռ հարցերի առջեւ: Հայաստանի անկախացումով հիմքն էր դրվում Հանրապետութեան, սակայն սկսւում էր դժարութիւնների մի նոր շարք: Պետք էր ոչնչից պետութիւն կառուցել, հիմնաւորել, զարգացնել ու պահպանել այն:

Սահմանափակ էին հնարաւորութիւններն ու միջոցները, բարդ էր կացութիւնը: Արտաքին ճակատի վրայ միշտ առկայ էր մէկ կողմից հարեւան երկրների աննպաստ դիրքորոշումը եւ միւս կողմից՝ ներքին ճակատում կարգաթափանցների կնճռոտ հարցը, սովի վտանգը, համաճարակները, դեղորայքի պակասը եւ այլ բազում դժարութիւններ: Այնքան դժար ճիգերով ձեռք բերած անկախութիւնը պահպանելու համար անհրաժեշտ էր իրականացնել պետական կառոյցը, դառնալ պետութիւն իր ամբողջական իմաստով:

Հայաստանի օրւայ վարիչները, գիտակից այս իրողութեան, իրար յաջորդող եօթ դահլիճների գործունեութեան ընթացքում ձեռնարկեցին ընդհանուր կազմակերպման եւ կառուցման աշխատանքի:

Հայաստանի ղեկավարութիւնը, գերագոյն ճիգերով ստեղծած Հանրապետութիւնը պահպանելու հիմնական մտահոգութեամբ, որոշում է համաձայնել բոլշեւիկ ղեկավարութեան հետ, եւ այդ բանակցութիւնների համար 25 Նոյեմբեր 1920-ին կազմում է մի նոր դաիլիճ:

Սիմոն Վրացեան՝ վարչապետ եւ արտաքին գործոց

նախարար:

Այս կառավարութիւնն էր, որ մինչեւ Դեկտ. 2 1920-ը մնաց իշխանութեան վրայ եւ Դո-Ըրգրան համաձայնութեամբ՝ 1920 Դեկտ. 2-ին Հայաստանի ղեկավարութիւնը յանձնեց խորհրդայիններին:

Ինչպէս ասացինք, առաջին հերթին անհրաժեշտ էր սկսել պետութեան կառուցումից: Անկախացումից հազիւ մէկ տարի անց Հայաստանն արդէն կազմակերպւած պետութիւն էր: Կային տասը զաւառներ, համապատասխան վարչութիւններով եւ դատական իշխանութիւններով: Յաջորդ տարում, մի նոր հրամանագրով, երկիրը բաժանւում է չորս նահանգների՝ Արարատեան, Շիրակի, Վանանդի եւ Սիւնեաց, իսկ իւրաքանչիւր նահանգ բաժանւում էր զաւառների: Յատուկ աշխատանք էր տարւում վարչական այդ բոլոր մարզերից ներս՝ հայացնելու պետական հիմնարկութիւնները: Կազմւում էր «Հայացման Կոմիտէ» եւ 1919-ի Մայիս 15-ին հայացւում են բոլոր հիմնարկութիւնները: Մի քանի ամիս յետոյ, Դեկտ. 26-ին, հայերէնը հռչակւում է պետական լեզու, Մարտ 16-ին բացւում է պետական դատարանը եւ սկսում են դատավարութիւնները:

18 Յունւար 1920-ին Հայաստանն իրողական (դէ ֆաքտո) ճանաչում է ստանում հաշտութեան խորհրդաժողովի կողմից, որով եւ սկսւում են նրա դիւանագիտական փոխարարբերութիւնները:

Կազմակերպւում է դէսպանական պաշտօնեութիւնը եւ նշանակւում են դէսպաններ:

1920-ին Օհանջանեանի կառավարութիւնը վաւերացւում է Հայաստանի Հանրապետութեան զինանշանը եւ պետական դրօշը: Յունիս 5-ին հրատարակւում է քաղաքացիական օրէնքը: Հիմնւում է պետական ռադիոկայանը, որի ձայնացրումը տարածւում է հեռուները եւ իր ծիր մէջ է առնում Բասրան, Տաշքենդը եւ Հաշտարխանը:

Մեծ եւ ծանր նիւթական դժարութիւններ գոյութիւն ունէին: Հայաստանի Հանրապետութիւնը ամսական 600-800 միլիոն ռուբլիի ծախսեր ունէր: Մինչեւ Օգոստոս 1920-ը հրապարակւում են երկու միլիարդ ռուբլիի հայկական արժեթղթեր եւ ապա հայկական թղթադրամ: Դրամական հոսման առաջն առնելու համար պետութիւնը ստեղծում է ոսկու հիմնադրամը եւ Հայաստանի Հանրապետութեան փոխառութեան դրութիւնը, որ կատարւում է բաժանորդագրութեան հիմունքով: Պետական բիւջէն հաւասարակշռելու համար լուրջ աշխատանք է տարւում՝ կազմակերպելու առետրական եւ արդիւնաբերական կենսքը: Մշակւում է տուրքերի օրինագիծ եւ սահմանւում է յառաջատուական տուրքի դրութիւն:

Տնտեսական մարզից ներս մեծ հետաքրքրութիւններ են յայտ բերում օտար ընկերութիւններ: Ներկայացւում են զանազան առաջարկներ պեղումներ կատարելու, կառուցումներ ստանձնելու եւ հանքեր արտահանելու: Խնամակատարական նախարարութիւնը մեծ ճիգ էր թափում իր աշխատանքների իրագործման համար: Շատ կարճ ժամանակի ընթացքում հաստատւում են արհեստանոցներ, գործարաններ, աշխատանոցներ, հիւսւածեղէնի եւ կաշւեղէնի գործարաններ, կահագործարաններ եւն:

Պետութիւնը յատուկ գուրգուրանքի առարկայ է դարձնում համագործակցականների դրութիւնը: Հիմնւում է «Կօօպերացիաների միութիւն», որին անդամակցում էին 350 համագործակցական եւ ունէր 95,000 անդամ: Եթէ նկատի առնենք, որ իւրաքանչիւր անդամ միջին հաշւով հինգ հոգու հոգատարութիւն էր ստանձնում, նշանակւում է, թէ համագործակցականներից օգտւում էին մօտ 475,000 անձ: Մինչեւ 1920թ. պետութիւնը մօտ 150 միլիոն ռուբլիի յատկացումներ կատարեց Միութեան: Մեծ զարկ տւեց երկրագործութեան: Կազմեց Հողային Յա-

տուկ Կոմիտէ, որ բծախնդիր կերպով քննելուց յետոյ լքեալ եւ եկեղեցական հողերը, դրանք բաժանեց գլխաւորաբար Ծաղկաձորի, Էջմիածնի, Աշտարակի, Ապարանի ու Նոր Բայազետի շրջանների գիւղացիներին:

Այս ուղղութեամբ կազմեց նաեւ Սերմնացանի Յատուկ Կոմիտէ, որ մեծ ջանք թափեց ապահովելու համար սերմացու հունտեր: Այս կոմիտէի աշխատանքը նպաստաւոր անդրադարձ ունեցաւ երկրի երկրագործութեան եւ գիւղատնտեսութեան վրայ: Մեծ աշխատանք տարւեց հողային եւ հանքային հետազոտութիւնների մարզում եւ մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձաւ պեղելու աղահանքերն ու ածխահանքերը, ինչպէս նաեւ ունեւալու ջրային ուժի եւ ոռոգման աղբիւրներ, որոնց հետ մշակեց էլեկտրակայանների հաստատման ծրագիրը:

Ընկերային մարզում լուրջ ուշադրութեան առարկայ դարձաւ առողջապահական հարցը: Համապատասխան մարմիններն ու պատասխանատուները ամեն գնով ճիգ պահեցին բարելաւելու համար ժողովրդի առողջապահական պայմանները: 1919 թի սկզբում գոյութիւն ունէր միայն 9 հիւանդանոց 300 մահճակալով, իսկ 1920-ի վերջերին գործում էին 30 հիւանդանոցներ 1600 մահճակալով, եւ 5 բժշկակայան: Հաստատուեցին բուժկայաններ ու դէղակայաններ, ուր ջբաւորներին անվճար դեղ էր բաշխւում, իսկ աշխատաւորներին տրւում էր 50 առ հարիւր գեղջ:

Կրթական-մշակութային մարզում նոյնպէս տենդագին աշխատանք էր տարւում, 1919-ին Հայաստանում արդէն գործում էին 431 տարրական դպրոցներ՝ 1096 ուսուցիչներով եւ 38.015 աշակերտներով, եւ 20 միջնակարգ դպրոցներ 288 ուսուցիչներով եւ 5162 աշակերտներով: 31 Յունւար 1920-ին հիմնեց Երեւանի պետական համալսարանը: Մշակութային գետնի վրայ մեծ ճիգ էր գործադրում յուշարձանների պահպանման եւ արւեստի հովանաւորման տեսակետից: Հիմնեցին ազգագրական-մարդաբանական թանգարան, գրադարան, թատերական դպրոց եւ երաժշտական դպրոցներ:

Շատ հպանցիկ այս ակնարկը Հայաստանի Անկախ Հանրապետութեան ընդամենը երկու տարիների կարճատեւ կենսքում եղած իրագործումների վրայ, բաւարար փաստեր են ապացուցելու, թէ ինչպիսի մեղաշան ու տենդագին աշխատանք էր տարւում աւարից ու աւերից յարութիւն առած մեր նորահաստատ հանրապետութեան մէջ, որոնք չի կարելի ժխտել որեւէ՝ պատմաշինութեամբ, միտումնաւոր մոռացումներով ու անտեսումներով: Այդ իրագործումները ենթահողն են ներկայ Հայաստանի զարգացման, հիմնական ատաղձը Հայ ժողովրդի կամքով, նրա արդար վաստակով, նրա ամբակուռ հաւատքով, նրա ապրելու եւ գոյատեւելու տենչով ու վճռակալութեամբ հիմնադրած պետականութեան:

1918 Մայիս 28-ը հիմնաքաղն է վերածնւած Հայաստանի, անկախ լինի նա, թէ խորհրդային, եւ այս բացարձակ ճշմարտութիւնը պէտք է ընդունի որեւէ հայ, որ հաւատարիմ է Հայաստանին:

Մեր անկախութեան վաթսուամեակը նշել՝ նշանակւում է ամենից առաջ յարգանք մատուցել մեր պետականութեան հիմնաքարը կերտողների յիշատակին եւ ապա ազգովին ձգտել իւրաքանչիւր ժողովրդի ու ազգութեան համար նւիրական ու հիմնական նպատակին ու նրա ճակատագրին:

Այս հավատամքն է, որ մեր նոր սերնդին պիտի առաջնորդի կատարեալին, վերջնականին:

Փա՛ռք յաւերժական Հայաստանին:

**«Ալիք» օրաթերթ
Շաբաթ, 27 Մայիս 1978., թիւ 115
Նորայր Պահլաւունի
/հապավումներով/**